# ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

***Սամվել Մանուկյան***

2003-2004թթ. *CRRC* (*Caucasus Research Resource Center* – Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն) տվյալների հավաքագրման նախաձեռնության կողմից իրականացվել է տնային տնտեսությունների հետազոտություն հարավկովկասյան երեք երկրների մայրաքաղաքներում՝ Երևանում, Թբիլիսիում, Բաքվում: Նախաձեռնության նպատակն էր ստեղծել տվյալների բաց շտեմարան բոլոր հետազոտողների համար: Հարավային Կովկասում հետազոտությունն իրականացվել է առաջին անգամ, օմնիբուսային հարցաթերթով, որը կազմված էր հետևյալ բաժիններից.

A. Տնային տնտեսությունների ընդհանուր բնութագրերը
D. Ժողովրդագրություն
E. Կրթություն
M. Միգրացիա
H. Առողջապահություն
P. Քաղաքական վարք/հայացքներ
S. Սոցիալական ինստիտուտներ
R. Հանցագործություն
C. Տնտեսական վիճակ

Հետազոտության դաշտային փուլը տեղի է ունեցել 2003թ. մայիս-հունիսին: Յուրաքանչյուր մայրաքաղաքում նախատեսված էր լրացնել 1500-ական հարցաթերթիկ: Երևանում լրացվել են 1500, Թբիլիսիում՝ 1472, Բաքվում՝ 1489 հարցաթերթիկ:

Այստեղ ներկայացված են S, R, P բաժինների որոշ տվյալներ:

## *Հարավային Կովկասի մայրաքաղաքների ազգային-կրոնական կազմը*

*Աղյուսակ 1-ում* տրված է Երևանի, Բաքվի և Թբիլիսիի բնակչության ազգային կազմը ըստ հետազոտության ընթացքում ստացված տվյալների: Համեմատության համար նույն աղյուսակում տրված է նաև հարավկովկասյան մայրաքաղաքների բնակչության ազգային կազմն ըստ 1989թ. մարդահամարի:

Ակնհայտ է, որ Հարավային Կովկասի մայրաքաղաքների բնակչության ազգային կազմը դառնում է ավելի միատարր՝ խորհրդային տարիներին Հարավային Կովկասում գոյություն ունեցող «ազգային մանրակերտի» կլաստերներն (խմբերը) աստիճանաբար խոշորանում են: Այդ գործընթացն առավել արագ է տեղի ունենում մայրաքաղաքներում, որոնք էլ հանդիսանում են դրա «գաղափարակիրները»: Հարկ է նշել, որ Երևանում այդ վիճակն ավանդական է, իսկ Բաքվում և Թբիլիսիում միատարրացման գործընթացն առա-

վել եռանդուն է վերջին 15 տարիների ընթացքում: Նույնպիսի գործընթացներ են տեղի ունեցել և շարունակում են տեղի ունենալ նաև Բալկաններում և ԱՊՀ բոլոր հանրապետություններում՝ սկսած Եվրամիության անդամ դարձած Մերձբալթյան հանրապետություններից, վերջացրած Կենտրոնական Ասիայի հանրապետություններով: Սակայն Հարավային Կովկասում ներկայիս անցումային գործընթացները խիստ բարդանում են այն պատճառով, որ այն քաղաքակրթական մարգինալ տարածք է, որտեղ վերականգնվել է ռուսական, իրանական և թուրքական քաղաքակրթական համալիրների ավանդական մրցակցությունը և որոնց ավելացել են նաև եվրոպական ու ամերիկյան առանձնահատուկ և հզոր ազդեցությունները:

*Աղյուսակ 1.*

*Հարավկովկասյան մայրաքաղաքների ազգային կազմն ըստ 2004թ. հարցման և 1989թ. մարդահամարի տվյալների*[1,2]

| | Երևան | | Բաքու | | Թբիլիսի | |
|---|---|---|---|---|---|---|
| | 1989 | 2004 | 1989 | 2004 | 1989 | 2004 |
| Հայ | 96.4% | 96.7% | 10.0% | - | 12.0% | 6.3% |
| Ադրբ. | | | 66.0% | 90.7% | 1.4% | 0.6% |
| Վրացի | | | | | 66.1% | 86.4% |
| Ռուս | 1.9% | 1.3% | 16.5% | 6.0% | 10.0% | 2.2% |
| Այլ | 1.7% | 2.0% | 7.5% | 3.3% | 10.5% | 4.5% |
| Ընդամենը | **100.0%** | **100.0%** | **100.0%** | **100.0%** | **100.0%** | **100.0%** |
| *Ներկայացված են միայն այն ազգերի տվյալները, որոնք նշված են եղել 1989թ. մարդահամարի ընթացքում:* | | | | | | |

Ինչպես նշված պետություններում, այնպես էլ, մասնավորապես, Հարավային Կովկասում այս իրողությունը հնարավոր չէ անտեսել կամ նսեմացնել: Խնդիրն այն է, թե ինչպես կազմավորել առաջացող էթնիկապես «զտված» տարածքների և պետությունների միջև դրական և կառուցողական համագործակցությունը՝ հնարավորին չափով նվազեցնելով տարածաշրջանում առկա հակամարտային ներուժը:

Հետխորհրդային ժամանակաշրջանում Հարավային Կովկասի հանրապետություններում տեղի է ունենում կրոնական զգացողության և գիտակցության արագ վերականգնում: Կրոնները, դրանց ուղղությունները և աղանդները իրականացնում են տարբեր հասարակական գործառույթներ՝ լրացնում են նորացվող հասարակություններում առաջացած գա-

[1] 1989թ. տվյալները տրված են ըստ Национальный состав населения СССР, Москва, Финансы и статистика, 1991.
[2] Աղյուսակների տվյալների ճշտությունն է 0,01:

դափարախոսական բացերը, իսկ սոցիալապես անպաշտպան խավերի համար դառնում են հոգեբանական պաշտպանության միջոց:

*Աղյուսակ 2-ում* տրված է հարավկովկասյան մայրաքաղաքներում պետականակերտ ազգերի կրոնական պատկանելության բաշխումը, որը վեր է հանվել *«Արդյոք Դուք որևէ կրոնի հետևո՞ղ եք: Եթե այո, ապա ո՞ր»* հարցի միջոցով: Ընդ որում՝ հարցվողին հնարավոր պատասխաններ չէին տրամադրվում: Հետևաբար, աղյուսակի տվյալներով հաստատվում է, որ մայրաքաղաքների պետականակերտ ազգերի ներկայացուցիչների բացարձակ մեծամասնության համար կրոնական պատկանելությունը վերածվել է քաղաքակրթական-ազգային ինքնանույնականացման (ինքնաիդենտիֆիկացման) կարևոր տարրի: Թբիլիսիում այն առկա է վրացի բնակչության 96.9%-ի, Բաքվում՝ ադրբեջանցիների 98.5%-ի, Երևանում՝ հայերի 88.9%-ի մոտ:

Հատկանշական է, որ Թբիլիսիում և Բաքվում ոչ մի կրոնական ուղղության չպատկանողները կազմում են մոտ 2%, իսկ Երևանում՝ 8%:

*Աղյուսակ 2.*

*Հարավային Կովկասի մայրաքաղաքների պետականակերտ ազգերի կրոնական պատկանելությունը*

| Կրոնական ուղղություն | Հայեր Երևանում | Ադրբեջանցիներ Բաքվում | Վրացիներ Թբիլիսիում |
|---|---|---|---|
| Հայ Առաքելական եկեղեցի | 88.8% | - | - |
| Ուղղափառ եկեղեցի | - | - | 96.9% |
| Իսլամ | - | 98.46% | - |
| Ոչ մի | 8.8% | 1.10% | 1.20% |
| Այլ | 2.38% | 0.44% | 1.93% |
| Ընդամենը | 100.0% | 100.0% | 100.0% |

Համաձայն Ադրբեջանում 2001թ. իրականացված հարցման տվյալների, Ադրբեջանում իրեն աթեիստ է համարել բնակչության մոտ 10%-ը, ակտիվ հավատացյալ է եղել համարյա նույնքան բնակչություն: Հետևաբար, տվյալ դեպքում Բաքվում ոչ մի կրոնական ուղղության չպատկանողների համար ստացված 2%-ը նշանակում է իսլամի՝ որպես նույնական (իդենտիֆիկացիոն) տարրի, նշանակության զգալի աճ:

Այսպիսով՝ կրոնական զարթոնքը Հարավային Կովկասում մատնանշում է այն հանգամանքը, որ Հարավային Կովկասում առկա է քաղաքակրթական-կրոնական հիմքի վրա բաժանարար գծի կազմավորման (վերահաստատման) միտում, որը պայմանավորող ***հիմնական գործոնն*** ունի ինքնակա (սպոնտան) բնույթ: Թե ինչպիսին կլինի այդ միտման փոխազդեցությունը արևելյան աշխարհիկ հասարակության կազմավորման միտումների հետ՝ մոնիթորինգային հետազոտական խնդիր է:

Այժմ դիտենք Երևանի, Բաքվի և Թբիլիսիի բնակչության կրոնական-ազգային կազմը *(Աղյուսակներ 3-5):*

*Աղյուսակ 3.*

*Երևանի բնակչության կրոնաազգային կազմը*

| | ՀԱԵ | Ոչ մի | Ուղղ. | Իսլամ | Կաթ. | ԵՀՎ | Ավ. | Մոլ. | Այլ | ՊՉ | Ընդ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հայ | **85.9%** | **8.5%** | 0.2% | 0.1% | 0.3% | 0.5% | 0.3% | | 0.3% | 0.5% | **96.7%** |
| Ռուս | 0.1% | 0.1% | **1.1%** | | | 0.1% | | | | | **1.3%** |
| Այլ | | 0.1% | 0.5% | 0.1% | | | | 0.1% | | | **0.8%** |
| Ասորի | 0.5% | 0.1% | | | | | | | | | **0.6%** |
| Աբխազ | 0.3% | | | | | | | | | | **0.3%** |
| Հույն | 0.1% | | | | | | | | | | **0.1%** |
| Եզդի | 0.1% | | | | | | | | 0.1% | | **0.1%** |
| Ընդ. | 87.0% | 8.9% | 1.7% | 0.2% | 0.3% | 0.6% | 0.3% | 0.1% | 0.4% | 0.5% | **100.0%** |
| ՀԱԵ - Հայ Առաքելական եկեղեցի, Ուղղ. – Ուղղափառ եկեղեցի, Կաթ. – Կաթոլիկ եկեղեցի, ԵՀՎ- Եհովայի վկաներ, Ավ. - Ավետարանական եկեղեցի, Մոլ. – Մոլոկաններ, ՊՉ – Պատասխան չկա | | | | | | | | | | | |

*Աղյուսակ 3-ում* առավել հատկանշական է այն, որ կրոնական փոքրամասնություններից ամենամեծ քանակություն է ստացվել Եհովայի վկաներ աղանդի համար: 4-5 տարի առաջ կատարվող զանգվածային հետազոտություններում այդ աղանդի ներկայացուցիչները թաքցնում էին իրենց կրոնական պատկանելությունը, իսկ այս հետազոտության ընթացքում նրանք հայտարարում էին այդ մասին: Եհովայի վկաների թվի վիճակագրական գնահատականի վերին սահմանը կազմում է 1.1%:

*Աղյուսակ 4.*

*Բաքվի բնակչության կրոնաազգային կազմը*

| | Իսլամ | Ուղղ. | Կաթ. | Հուդ. | Ոչ մի | Ընդ. |
|---|---|---|---|---|---|---|
| Ադրբեջանցի | **89.3%** | 0.3% | | | 1.0% | **90.7%** |
| Ռուս | 0.7% | **4.0%** | 0.5% | | 0.8% | **6.0%** |
| Լեզգի | **1.0%** | 0.1% | | | 0.1% | **1.2%** |
| Թալիշ | 0.5% | | | | | **0.5%** |
| Հրեա | 0.1% | | | 0.2% | 0.1% | **0.3%** |
| Այլ | 1.3% | 0.1% | 0.1% | | | **1.3%** |
| **Ընդ.** | **92.8%** | **4.4%** | **0.5%** | **0.2%** | **2.0%** | **100.0%** |

Բաքվում՝ կրոնական փոքրամասնություններին պատկանելության տեսակետից, հատկանշական է, որ ուղղափառ կրոնական ուղղության ներկայացուցիչների 0.3%-ն իրեն համարել է ադրբեջանցի:

*Աղյուսակ 5.*

*Թբիլիսիի բնակչության կրոնաազգային կազմը*

| | Ուղղ. | ՀԱԵ | Ոչ մի | ԵՀՎ | Իսլ. | Կաթ. | Այլ | Ընդ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Վրացի | **83.7%** | 0.1% | 1.2% | 0.6% | 0.1% | 0.4% | 0.3% | **86.4%** |
| Հայ | 2.0% | **4.1%** | 0.1% | | | 0.1% | | **6.3%** |
| Ռուս | **2.0%** | 0.1% | 0.1% | 0.1% | | | | **2.2%** |
| Օս | 1.0% | 0.1% | 0.1% | 0.1% | | | 0.1% | **1.2%** |
| Եզդի | 0.4% | | 0.3% | 0.1% | | | 0.4% | **1.2%** |
| Ադրբ. | 0.1% | | | | 0.5% | | 0.1% | **0.6%** |
| Հույն | 0.4% | | 0.1% | | | | | **0.5%** |
| Հրեա | 0.1% | | 0.1% | 0.1% | | | 0.3% | **0.5%** |
| Այլ | 0.8% | | | 0.1% | 0.1% | | 0.1% | **0.2%** |
| **Ընդ.** | **90.4%** | **4.3%** | **1.8%** | **1.0%** | **0.7%** | **0.5%** | | **100.0%** |

Դիտարկվող տվյալների բազայի հիման վրա հնարավոր չէ պատկերացում կազմել կրոնական գիտակցության կառուցվածքի վերաբերյալ, որն առանձին հետազոտության առարկա է, սակայն հետազոտության հարցաշարում առկա են մի քանի ինդիկատորներ, որոնք ամենաընդհանուր պատկերացումներ են տալիս կրոնական վարքի որոշակի բնութագրերի վերաբերյալ: Այդ ինդիկատորներից է կրոնական արարողություններին մասնակցության ինտենսիվությունը, որը վեր է հանվել.

*S8. «Հաճախո՞ւմ եք արդյոք եկեղեցական արարողությունների, և եթե այո, ապա որքա՞ն հաճախ»*

հարցի միջոցով:

*Աղյուսակ 6.*

*«Հաճախո՞ւմ եք արդյոք եկեղեցական արարողությունների, և եթե այո, ապա որքա՞ն հաճախ»*

| | Ուղղ. | ՀԱԵ | Իսլամ | Կաթոլիկ | ԵՀՎ | Ոչ մի |
|---|---|---|---|---|---|---|
| Ամեն օր | 0.5% | 0.7% | **10.6%** | **9.5%** | **13.0%** | 0.0% |
| Շաբաթը մի քանի անգամ | **4.0%** | 1.7% | 0.4% | **4.8%** | **26.1%** | 0.0% |
| Շաբաթական 1 անգամ | **14.2%** | **6.7%** | 2.1% | **19.0%** | 4.3% | 0.5% |
| Ամիսը 1 անգամ | 15.2% | 14.0% | 5.9% | 9.5% | 0.0% | 1.1% |
| Ժամանակ առ ժամանակ | 55.2% | 69.2% | 36.6% | 33.3% | 4.3% | 24.2% |
| Երբեք | **10.8%** | **7.7%** | **44.4%** | **23.8%** | **52.2%** | **73.2%** |
| Դժվ. է պատասխանել | 0.1% | 0.0% | 0.0% | 0.0% | 0.0% | 1.1% |
| Հրաժարվել է պատասխանել | 0.0% | 0.0% | 0.0% | 0.0% | 0.0% | 0.0% |
| Ընդամենը | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% |

Եթե որպես այդ հիպոթեզը հիմնավորող ***մոտարկող փոփոխական*** դիտարկենք կրոնական արարողություններին մասնակցության ինտենսիվությունը, ապա բնակչության

այդ հատվածի համար կստանանք հետևյալ գնահատականները[1]. Թբիլիսիում՝ 18.7%, Բաքվում՝ 13.1%, Երևանում՝ 9.1%:

Ստացված տվյալները, որոնց համաձայն՝ Բաքվում ակտիվ կրոնական վարքով մուսուլմանների հարաբերական թիվը 10.6% է, համընկնում են վերը նշված հետազոտության արդյունքի հետ: Այսինքն՝ իրական կրոնական գիտակցություն կրող անձանց թիվն էականորեն չի փոփոխվել: Հատկանշական է նաև Բաքվում կրոնական արարողություններին երբեք չմասնակցող անձանց մեծ թիվը՝ 44.4%, ինչը հիմնավորում է այն վարկածը, թե անհատի մոտ կրոնական պատկանելության առկայությունը նշանակում է առավելապես նույնականացման տարր, այլ ոչ թե կրոնական գիտակցության առկայության ինդիկատոր:

*Աղյուսակ 7.*

*Վերաբերմունքը այլ կրոնական ուղղությունների ներկայացուցիչների նկատմամբ*

| Երևան | ՀԱԵ | Ուղղ. | Իս. | Կաթ. | ԵհՎ | Ավ. | Հուդ. | Բապ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Դրական* | 90.9% | 56.0% | **14.7%** | 48.5% | **1.6%** | 5.2% | 6.1% | 3.2% |
| *Ավելի շուտ դրական* | 3.1% | 13.1% | **7.4%** | 13.4% | **7%** | 4.5% | 4.0% | 2.5% |
| *Չեզոք* | 4.5% | 22.9% | **30.3%** | 26.3% | 10.0% | 25.5% | 31.8% | 29.9% |
| *Բացասական* | 0.3% | 1.2% | **10.4%** | 2.0% | 4.7% | 7.1% | 7.4% | 5.7% |
| *Ավելի շուտ բացաս.* | 0.9% | 4.1% | **32.7%** | 5.7% | 81.4% | 43.3% | 37.5% | 36.4% |
| *ԴՊ* | 0.1% | 2.6% | 4.3% | 3.9% | 1.4% | 14.3% | 13.1% | 22.1% |
| *Մերժ. պատասխ.* | 0.1% | 0.1% | 0.1% | 0.1% | 0.1% | 0.1% | 0.1% | 0.1% |
| **Բաքու** | **ՀԱԵ** | **Ուղղ.** | **Իս.** | **Կաթ.** | **ԵհՎ** | **Ավ.** | **Հուդ.** | **Բապ.** |
| *Դրական* | - | **28.9%** | 93.9% | 27.4% | - | - | 25.7% | - |
| *Ավելի շուտ դրական* | - | **12.4%** | 2.9% | 12.4% | - | - | 8.5% | - |
| *Չեզոք* | - | **47.1%** | 2.8% | 48.8% | - | - | 53.5% | - |
| *Բացասական* | - | **3.4%** | 1% | 3.0% | - | - | 3.0% | - |
| *Ավելի շուտ բացաս.* | - | **8.0%** | 3% | 8.3% | - | - | 9.0% | - |
| *Մերժ.պատասխ.* | - | 0.2% | | 0.1% | - | - | 0.2% | - |
| **Թբիլիսի** | **ՀԱԵ** | **Ուղղ.** | **Իս.** | **Կաթ.** | **ԵհՎ** | **Ավ.** | **Հուդ.** | **Բապ.** |
| *Դրական* | 13.3% | 85.5% | **8.0%** | 15.9% | **3.5%** | 5.4% | 7.2% | 4.2% |
| *Ավելի շուտ դրական* | 22.9% | 8.8% | **13.7%** | 30.2% | **4.8%** | 6.6% | 11.4% | 5.6% |
| *Չեզոք* | 49.2% | 5.2% | **52.4%** | 44.9% | 19.8% | 33.5% | 47.4% | 29.6% |
| *Ավելի շուտ բացաս.* | 9.0% | | **16.6%** | 5.0% | 28.3% | 21.0% | 16.1% | 24.3% |
| *Բացասական* | 2.8% | 2% | **5.1%** | 2.1% | 41.4% | 21.7% | 12.5% | 29.8% |
| *ԴՊ* | 2.8% | 3% | 4.1% | 1.8% | 2.1% | 11.8% | 5.4% | 6.5% |

ՀԱԵ - Հայ Առաքելական եկեղեցի, Ուղղ. – Ուղղափառ եկեղեցի, Իսլ. – Իսլամ, ԵհՎ - Եհովայի վկաներ, Ավ. - Ավետարանական եկեղեցի, Հուդ. – Հուդայական եկեղեցի, Բապ. - Բապտիստական եկեղեցի

[1] Քրիստոնեական եկեղեցում կրոնական վարքի նորմ է մասնակցությունը կիրակնօրյա ժամերգություններին (շաբաթական 1 անգամ), իսկ իսլամի պարագայում՝ ամենօրյա աղոթքները մզկիթում: Հետևաբար, այստեղ որպես խնդրո առարկա արտապատկերող պատասխաններ անհրաժեշտ է դիտարկել մահմեդականների համար «Ամեն օր» պատասխանը (ամենօրյա միասնական աղոթքներ մզկիթում), իսկ քրիստոնյաների համար՝ «շաբաթական մեկ անգամ» պատասխանը (կիրակնօրյա պատարագներ):

Այժմ դիտենք մայրաքաղաքներում տարբեր կրոնական ուղղությունների հետևորդների նկատմամբ բնակչության վերաբերմունքի բաշխումը, որը կարելի է դիտարկել որպես կրոնական հանդուրժողականությանը ***մոտարկող փոփոխական***[1]:

Թբիլիսիում և Երևանում կրոնական հանդուրժողականությունն ավելի բարձր է իսլամի, քան կրոնական աղանդների նկատմամբ և ավելի բարձր է ավանդական քրիստոնեական ուղղությունների, քան իսլամի հանդեպ: Ըստ ներկայացված տվյալների՝ Բաքվում կրոնական հանդուրժողականության մակարդակը բոլոր կրոնական ուղղությունների և աղանդների նկատմամբ ամենաբարձրն է[2]:

*Աղյուսակ 8-ում* տրված են մայրաքաղաքներում կովկասյան ավանդական կրոնական ուղղությունների նկատմամբ բացասական վերաբերմունքի մակարդակները:

*Աղյուսակ 8.*

*Բացասական վերաբերմունքի մակարդակը ավանդական կրոնների նկատմամբ*

| | Հայ Առաք. եկեղեցի | Ուղղ. եկեղեցի | Իսլամ |
|---|---|---|---|
| **Երևան** | 1.2% | 5.3% | **43.1%** |
| **Թբիլիսի** | **11.8%** | 0.2% | **21.7%** |
| **Բաքու** | - | 11.4% | 0.4% |

*Տրված են «Բացասական» և «Ավելի շուտ բացասական» վերաբերմունքի գումարային տոկոսները: Ադրբեջանական կողմը Հայ Առաքելական եկեղեցու նկատմամբ վերաբերմունքի տվյալներ չի ներկայացրել:*

Կրոնական հիմքի վրա առաջացող հակամարտությունների բնութագրերի շարքում կարևոր է նշել, թե ինչպես է փոփոխվում տարբեր կրոնական ուղղությունների հետևորդների վերաբերմունքը միմյանց նկատմամբ կրոնական գիտակցության փոփոխության (աճի կամ նվազման) դեպքում: Նախնական հետազոտությունները ցույց են տվել, որ հիմքեր կան ենթադրելու հետևյալ կախվածությունների գոյությունը *(Աղյուսակ 9):*

Աղյուսակից բխում է, որ կրոնական գիտակցության աճը, որպես կանոն, բերում է այլ կրոնների նկատմամբ բացասական վերաբերմունքի աճի և դրական վերաբերմունքի նվազման: Այդ աճը տեղի է ունենում ոչ միայն դրական և բացասական վերաբերմունքների հարաբերակցության փոփոխության, այլև չեզոք վերաբերմունքի երանգավորման հետևանքով:

Բացառություն է կազմում Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների վերաբերմունքը: Նրանց կրոնական գիտակցության աճի արդյունքում աճում է դրական վերաբերմունքն Ուղղափառ եկեղեցու հետևորդների նկատմամբ, այսինքն՝ սկսում է ազդեցություն գործել «քրիս-

[1] Աղյուսակը չծանրաբեռնելու համար այստեղ տրված է պարզապես մայրաքաղաքների բնակչության վերաբերմունքը կրոնական ուղղությունների նկատմամբ՝ հաշվի առնելով, որ յուրաքանչյուր մայրաքաղաքում բնիկ կրոնական ուղղության ներկայացուցիչները բացարձակ մեծամասնություն են կազմում:

[2] Ադրբեջանական կողմը Բաքվի բնակչության վերաբերմունքի մասին Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների նկատմամբ տվյալներ չի ներկայացրել:

տոնեական միասնականություն» գործոնը: Սակայն իսլամի հետևորդների նկատմամբ դրական վերաբերմունքը փոփոխություններ չի կրում, ինչը կարող է բացատրվել այն հանգամանքով, որ իսլամի հետևորդների նկատմամբ նրանց բացասական վերաբերմունքի մեջ, կրոնական գործոնի հետ մեկտեղ, գործում են նաև այլ պատմամշակութային (քաղաքակրթական) գործոններ, որոնք «ճնշում» են կրոնական գործոնի ազդեցության արտահայտությունը:

*Աղյուսակ 9.*

*Այլ կրոնական ուղղությունների ներկայացուցիչների նկատմամբ դրական և բացասական վերաբերմունքի փոփոխության կախվածությունը կրոնական գիտակցության աճի դեպքում (որպես կրոնական գիտակցության մակարդակը մոտարկող փոփոխական կիրառված է կրոնական արարողություններին մասնակցության ինտենսիվությունը)*

| Կրոն | Նկատմամբ | Դրական | Միջ. | Բացասական | Միջ. |
|---|---|---|---|---|---|
| Իսլամ | Ուղղափառ | Նվազում է | 38.8% | Աճում է | 11.6% |
| Իսլամ | Հայ Առ. եկ. | - | - | - | - |
| Հայ Առ. եկ. | Իսլամ | Չի փոփոխվում | 18.2% | Աճում է | 42.8% |
| Հայ Առ. եկ. | Ուղղափառ | Աճում է | 72.6% | Աճում է | 4.8% |
| Ուղղափառ | Իսլամ | Նվազում է | 24.3% | Աճում է | 22.1% |
| Ուղղափառ | Հայ Առ. եկ. | Նվազում է | 34.7% | Աճում է | 12.6% |
| Ադրբեջանական կողմը Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների նկատմամբ իսլամի հետևորդների վերաբերմունքի վերաբերյալ տվյալներ չի ներկայացրել: | | | | | |

Իսլամի հետևորդների անհանդուրժողականությունը Ուղղափառ եկեղեցու հետևորդների նկատմամբ առավել բարձր է նրանց մոտ, ովքեր կրոնական արարողությունների չեն մասնակցում կամ մասնակցում են մերթ ընդ մերթ, ինչը մեկ այլ հիմնավորում է այն բանի, որ կրոնական մակերեսային գիտակցությունը առավելապես ազգային ինքնանույնականացման տարր է:

Հատկանշական է նաև Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների նկատմամբ Ուղղափառ եկեղեցու հետևորդների դրական վերաբերմունքի նվազումը կրոնական գիտակցության աճի հետ մեկտեղ: Այստեղ նույնպես պետք է որպես վարկած նշել (հիպոթեզացնել) հայերի նկատմամբ վրացիների ազգային վերաբերմունքի պրոյեկցիան կրոնական պատկանելության վրա:

### *Հանցագործությունների մակարդակը, վստահությունը պետական և հասարակական ինստիտուտների նկատմամբ և ապահովության զգացումը հասարակությունում*

#### *Հանցագործությունների վերաբերյալ անմիջական տեղեկացվածություն*

Կարելի է ենթադրել, որ անձի ապահովության զգացողության վրա նշանակալի ազդեցություն ունի անհատական փորձը, այն է՝ եղե՞լ է նա արդյոք որևէ հանցագործության

զոհ կամ վկա: Հարցաշարում առկա էր հարցվողների անհատական փորձը գնահատող հարցախումբ՝ հետևյալ հարցերով.

*R4. «Վերջին տարվա ընթացքում եղե՞լ եք արդյոք հանցագործության վկա կամ տուժող»*

Արդյունքները տրված են *Աղյուսակ 10-ում:*

*Աղյուսակ 10.*

*«Վերջին տարվա ընթացքում եղե՞լ եք արդյոք հանցագործության վկա կամ տուժող»*

| | ***Երևան*** | ***Բաքու*** | ***Թբիլիսի*** |
|---|---|---|---|
| Եղել եմ տուժող | 1.9% | 0.8% | 6.6% |
| Եղել եմ ականատես | 1.8% | 1.2% | 7.1% |
| Եղել եմ և՛ տուժող, և՛ ականատես | 0.2% | 0.3% | 1.1% |
| Ոչ | 95.9% | 96.5% | 85.3% |
| Հրաժարվել է պատասխանել | 0.2% | 1.1% | - |
| Ընդամենը | 100.0% | 100.0% | 100.0% |

Բաքվում և Երևանում հանցագործության վկա կամ ականատես անձանց թիվը բավական փոքր է՝ առավելագույնը 5%: Հետևաբար, եթե նույնիսկ այդ փաստը մեծ ազդեցություն ունի ապահովության զգացման վրա, այդպիսի փորձ ունեցողների փոքր թիվը չի կարող ***անմիջական*** մեծ ազդեցություն ունենալ ամբողջ ընտրանքի (և հետևաբար՝ հասարակության) վրա, չնայած միջնորդավորված ազդեցությունները և դրանց բարձր մակարդակները չեն բացառվում: Վրաստանում այդ անձանց թիվը անհամեմատ ավելի մեծ է՝ համարյա 15%, ինչը վկայում է, որ այս գործոնը Թբիլիսիում արդեն կարող է լինել բավական նշանակալի գործոն ապահովության զգացման նվազման համար: Բացի այդ, այս արդյունքը և Թբիլիսիում հարատև սոցիալ-քաղաքական անկայունությունը փոխադարձաբար հիմնավորում են միմյանց[1]:

*Աղյուսակ 11-ում* տրված են հանցագործությունների ամենատարածված տեսակները, որոնց զոհ կամ վկա են եղել հարցվողները:

[1] Տարբեր գիտական ոլորտներում հետազոտողներն ազատ են մեթոդաբանական մոտեցումներում կիրառել անկախ և կախյալ փոփոխականների սեփական սահմանումները: Մասնավորապես քաղաքագետները հարավկովկասյան հանրապետություններում սոցիալ-քաղաքական գործընթացների համեմատական վերլուծության և գնահատման ժամանակ կարող են կիրառել այս արդյունքները որպես անկախ փոփոխականներ՝ հիմնավորելու համար, որ Թբիլիսիում (Վրաստանում) քաղաքական անկայունությունը եղել է նշանակալիորեն ավելի բարձր (որոշակի ժամանակահատվածում): Իսկ հասարակագետները կարող են կիրառել անկախ և կախյալ փոփոխականների հակառակ նույնականացում: Հնարավոր է նաև դիտարկել այդ երկու՝ քաղաքական և հասարակական գործընթացների փոխադարձ ազդեցությունները (կիբեռնետիկական մոտեցում), ենթադրելով դրանց միջև դրական հետադարձ կապի առկայությունը (որոշակի ժամանակահատվածում) և բխեցնելով դրանից տվյալ հասարակության կառավարման պարամետրերը:

*Աղյուսակ 11.*

*Հանցագործությունների ամենատարածված տեսակները հարավկովկասյան մայրաքաղաքներում (հարցման ընթացքում նշված դեպքերի քանակը)*

| *Հանցագործության տեսակը, որի ականատեսը կամ զոհն է եղել հարցվողը* | *Երևան* | *Բաքու* | *Թբիլիսի* |
|---|---|---|---|
| Գողություն | 19 | 11 | 111 |
| Ծեծկռտուք | 11 | 18 | 69 |
| Կողոպուտ | 10 | 5 | 51 |
| Շանտաժ | 6 | 7 | 15 |

## *Բռնությունների հավանական աղբյուրները*

Միջմայրաքաղաքային համեմատությունների դեպքում, որպես բռնությունների առավել հավանական աղբյուրներ, որոշակիորեն առանձնանում են՝ Թբիլիսիում՝ խուլիգանները, գողերը և բռնությունների ընտանեկան աղբյուրները, Բաքվում՝ թմրամոլները *(Գծապատկեր 1):* Բաքվում՝ որպես բռնությունների հավանական աղբյուր, նշանակալիորեն ավելի ցածր է գնահատված ոստիկանությունը:

*Գծապատկեր 1.*

*«Որքանո՞վ է հավանական, որ Դուք բռնության զոհ դառնաք հետևյալ կառույցների/անձանց կողմից»*

Տրված են պատասխանների միջին արժեքները: Պատասխանների տարբերակներն են՝ «Շատ հավանական է» - 3, «Քիչ հավանական է» -2, «Հավանական չէ» - 1, «Բացառվում է» - 0




Առաջին մոտավորությամբ կարելի ընդունել, որ մայրաքաղաքներում վտանգների միջին մակարդակներն էականորեն չեն տարբերվում:

Երևանում հավանական բռնությունների աղբյուրների պրոֆիլն ունի համեմատաբար ավելի ցածր մակարդակ, քան Թբիլիսիում և Բաքվում:

Բոլոր քաղաքներում առավել վտանգավոր են ***գողերը և խուլիգանները,*** Բաքվում դրանց մակարդակին են ***թմրամոլները:***

Բոլոր միջիններն ունեն մեծ *ստանդարտ շեղումներ*, ինչը վկայում է, որ դիտարկվող վտանգներն «ունիվերսալ» չեն, այլ ունեն իրենց պայմանավորող հզոր գործոններ և հավանաբար դիրքավորված են հասարակության յուրահատուկ սոցիալ-հոգեբանական կամ սոցիալ-տնտեսական շերտերում:

## *Պետական և հասարակական մարմինների գործունեության արդյունավետության գնահատականները*

Այս բնութագրիչները (պարամետրեր) չափվել են հետևյալ հարցի միջոցով.

*R10. «Ձեր անվտանգության և քաղաքացիների իրավունքների ապահովման տեսակետից որքանո՞վ են արդյունավետ գործում հետևյալ մարմինները/անձինք».*

- *Ոստիկանություն*
- *Դատախազություն*
- *Հարևաններ*
- *Ընկերներ*
- *Քրեական հեղինակություններ*
- *Մասնավոր անվտանգության գործակալություններ*
- *Լրատվամիջոցներ*
- *Հասարակական կազմակերպություններ*

**Հնարավոր պատասխաններն էին՝** «Շատ արդյունավետ» - 5, «Արդյունավետ» - 4, «Շատ թե քիչ արդյունավետ» - 3, «Անարդյունավետ» - 2, «Լիովին անարդյունավետ» - 1:

Քաղաքացիների իրավունքների պաշտպանության տեսակետից բոլոր երեք մայրաքաղաքներում ավանդական միջանձնական կապերը (ազգականներ, ընկերներ, հարևաններ) մնում են առավել արդյունավետ միջոցները: Ինչ վերաբերում է պետական և քաղաքացիական հասարակության ինստիտուտներին, ապա դրանց արդյունավետությունն ավելի բարձր է գնահատված Բաքվում, երկրորդը Թբիլիսին է, երրորդը՝ Երևանը: Երևանում նշանակալիորեն ավելի բարձր է գնահատված քրեական հեղինակությունների միջամտության արդյունավետությունը *(Գծապատկեր 2):*

*Գծապատկեր 2.*

*«Ձեր անվտանգության և քաղաքացիների իրավունքների ապահովման տեսակետից որքանո՞վ են արդյունավետ գործում հետևյալ մարմինները/անձինք»*

Տրված են պատասխանների միջին արժեքները: Պատասխանների տարբերակներն են՝ «Շատ արդյունավետ» – 5, «Արդյունավետ» – 4, «Շատ թե քիչ արդյունավետ» – 3, «Անարդյունավետ» – 2, «Լիովին անարդյունավետ» – 1




| Մարմինը | Ազգա-կաններ | Ընկեր. | Հարևան. | Ոստիկ. | Դատա-խազ. | Քր. հեղ. | ՋԼՄ | ՀԿ | Մաս. անվտ. գործ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Երևան | 4,24 | 4,16 | 3,85 | 2,73 | 2,52 | 2,51 | 2,58 | 2,21 | 2,49 |
| Բաքու | 4,20 | 4,07 | 3,86 | 3,24 | 3,15 | 1,81 | 3,43 | 2,81 | 2,30 |
| Թբիլիսի | 4,15 | 4,14 | 3,78 | 2,75 | 2,92 | 2,09 | 3,07 | 2,65 | 2,33 |

Գծապատկերից բխում է, որ.

Անդրկովկասյան մայրաքաղաքների հասարակություններում անվտանգության և իրավունքների ապահովման տեսակետից ***ոչ ֆորմալ ուղիները*** մնում են ամենաարդյունավետ միջոցները:

Պետական ***իրավապահ մարմիններն*** առավել արդյունավետ են Բաքվում, հետո՝ Թբիլիսիում (դատախազություն) և ամենաանարդյունավետն են Երևանում:

Դրա փոխարեն՝ Երևանում ավելի արդյունավետ են հակոտնյա «իրավապահները»՝ ***քրեական հեղինակությունները,*** ի տարբերություն Թբիլիսիի և Բաքվի, որտեղ դրանց արդյունավետությունը համարյա հավասար է:

*Քաղաքացիական հասարակության ինստիտուտներն* առավել արդյունավետ են գնահատվել Բաքվում, հետո՝ Թբիլիսիում և վերջում՝ Երևանում:

Քաղաքացիների պաշտպանության բիզնեսի (մասնավոր) արդյունավետությունը երեք մայրաքաղաքներում էլ նույնն է:

Այս միջինների ստանդարտ շեղումները նույնպես բավականաչափ մեծ են, ինչը վկայում է դիտարկված ինստիտուտների արդյունավետության գնահատականների մեծ ցրվածության մասին:

*Գծապատկեր 2-ի* արդյունքները ճշգրտվում են, եթե դիտում ենք փորձարկվող մարմինների վերաբերյալ կարծիքների ձևավորվածության աստիճանները: *Գծապատկեր 3-ում* տրված են այն հարցվողների բաշխումները, որոնք դժվարացել են պատասխանել *R10* հարցին:

*Գծապատկեր 3.*

*Պետական ինստիտուտների վերաբերյալ կարծիքների ձևավորվածության աստիճանը*




| | Ազգա-կան | Ընկեր. | Հարև. | Ոստիկ. | Դտխ. | Քր. հեղ. | ԶԼՄ | ՀԿ | Մաս. անվ. զոր. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Երևան | 3,30% | 3,50% | 4,10% | 10,70% | 19,80% | 48,50% | 15,80% | 37,10% | 61,80% |
| Բաքու | 2,60% | 3,60% | 5,90% | 8,10% | 14,80% | 48,50% | 18,00% | 42,40% | 48,50% |
| Թբիլիսի | 3,60% | 3,00% | 3,90% | 5,00% | 10,50% | 34,50% | 15,30% | 27,10% | 44,50% |

Ինչպես և սպասելի էր, պատկերացումներն առավել ձևավորված են ավանդական ինստիտուտների վերաբերյալ՝ ***ազգականներ, ընկերներ, հարևաններ:***

Պետական մարմինների աշխատանքի արդյունավետության մասին կարծիքներն առավել լավ են ձևավորված, քան քաղաքացիական հասարակության մարմինների մասին կարծիքները:

Երևանի բնակչությունն ակնհայտորեն ավելի քիչ է տեղյակ մասնավոր գործակալություններից, քան Բաքվի և Թբիլիսիի բնակչությունը:

### *Վստահության մակարդակը պետական և հասարակական ինստիտուտների նկատմամբ*

Այս բնութագրիչի բաշխումները տրված են *Գծապատկեր 4-ում:*

*Գծապատկեր 4.*

*Վստահության աստիճանը պետական և հասարակական ինստիտուտների նկատմամբ*

Պատասխանների տարբերակներն են. «Լիովին վստահում եմ» – 5, «Հիմնականում վստահում եմ» – 4, «Չեզոք» – 3, «Հիմնականում չեմ վստահում» – 2, «Բոլորովին չեմ վստահում» – 1




| | Նախ. | Վարչ. | Պառլ. | Կուս. | Օմբ. | Դատ. | Ոստ. | Բան | Կրթ. Հ. | Առղ. Հ. | ԶԼՄ | ՀԿ | Բիզ. | Եկեղ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ե | 30,3 | 15,3 | 10,8 | 10,0 | 14,0 | 16,5 | 21,9 | 75,8 | 52,3 | 44,4 | 38,3 | 13,9 | 40,5 | 74,1 |
| Բ | 84,8 | 38,1 | 30,9 | 14,4 | 19,1 | 32,7 | 43,6 | 69,6 | 43,3 | 37,5 | 58,7 | 16,4 | 34,5 | 29,3 |
| Թ | 86,4 | 40,7 | 47,3 | 25,6 | 37,5 | 33,6 | 31,4 | 70,1 | 39,7 | 35,7 | 64,3 | 23,6 | 36,3 | 48,1 |

Ինստիտուտ

### *Պրոֆիլների ընդհանուր նկարագրությունը*

Ակնհայտ է, որ պետական և հասարակական ինստիտուտների նկատմամբ վստահության աստիճանի պրոֆիլները (վերը բերված դասակարգման շրջանակներում) երեք մայրաքաղաքներում էլ ունեն մոտավորապես նույն ***տեսքը***՝ պրոֆիլի տարրերի միջև կարգային (ռանգային) փոխհարաբերությունների տեսակետից, սակայն դրանք էականորեն տարբերվում են նույն պրոֆիլին պատկանող տարրերի մակարդակների միջև տարբերություններով, ինչպես նաև տարբեր պրոֆիլների պատկանող նույն տարրերի մակարդակներով:

Պրոֆիլների ***տեսքերի*** տարբերություններ առաջացնող բացառություններ են՝ խորհրդարանը (պառլամենտ) և օմբուդսմենը՝ Թբիլիսիում, ԶԼՄ-ն՝ Երևանում, եկեղեցին (կրոնը)՝ բոլոր երեք մայրաքաղաքներում:

### *Պետական մարմիններ*

Ակնհայտ է Թբիլիսիում պետական մարմինների նկատմամբ *(Գծապատկեր 8-ում՝* ***նախագահից մինչև ոստիկանություն շղթայում)*** վստահության մակարդակի գերազանցումը Բաքվի և առավել ևս՝ Երևանի նկատմամբ, ինչը բնական է Վրաստանի վերջին մեկ տարվա հասարակական-քաղաքական զարգացումների համատեքստում:

Բաքվում այդ հատվածի կարևորագույն առանձնահատկությունն է՝ նախագահին վստահության շատ բարձր մակարդակի նկատմամբ ***վարչապետի, խորհրդարանի և հատկապես կուսակցությունների նկատմամբ վստահության մակարդակների կտրուկ անկումը:***

Երևանի առանձնահատկությունն է **նախագահից մինչև ոստիկանություն** մարմիններ-ի նկատմամբ վստահության ցածր մակարդակը, ինչը բացատրվում է պետությունից հասարակության օտարվածությամբ, որը պատերազմական գործողությունների դադարից (1994թ. մայիս) և 1995թ. խորհրդարանական ընտրություններից հետո Հայաստանում առկա սոցիալ-քաղաքական կարևորագույն միտումներից մեկն է:

Բաքվում նախագահի նկատմամբ շատ բարձր վստահության մակարդակը պայմանավորված է Ադրբեջանում ավտորիտար միտումների շարունակական աճով, որը սկսվել է Հ.Ալիևի իշխանության գալով: Ադրբեջանի նախագահին տրված բարձր վստահության աստիճանի մի մասը «ժառանգվել» է նրա հորից՝ Հ.Ալիևից, ինչը հիմնված է՝ ա) խորհրդային շրջանի ավանդության վրա՝ ընդհանրապես, բ) խորհրդային շրջանում անձամբ Հ.Ալիևի կողմից խտացված հեղինակության վրա, գ) Հ.Ալիևի հետխորհրդային շրջանում հանրապետությունում ***ավանդական*** կարգուկանոնի հաստատման վրա և դ) իշխանության օրինականության (լեգիտիմության) վերաբերյալ ***արևելյան պատկերացումների վրա:***

Թբիլիսիում, ի թիվս նախագահի հետ զուգորդվածության, ***խորհրդարանի*** նկատմամբ առավել բարձր վստահության մակարդակը բացատրվում է նաև նրա՝ հեղափոխական ալիքով ընտրված լինելու հանգամանքով և նրանով, որ խորհրդարանի անդամների նշանակալի մասը նախ՝ նպաստել է Մ.Սահակաշվիլու հաղթանակին և, բացի այդ, ունի իր՝ Սահակաշվիլուց ***անկախ, անհատական*** և ներհատուկ հատկանիշները:

Բաքվում (որպես արևելյան հասարակություն ունեցող քաղաք) իշխանության մեջ գտնվելը ավելի բարձր հեղինակություն և դրա հետ զուգորդված՝ «վստահություն» է առաջացնում, քան սոսկ կուսակցական (քաղաքական համակարգին) պատկանելությունը: Մյուս կողմից՝ Հ.Ալիևի իշխանության վերականգնման (ռեստավրացիայի) ընթացքում նա իր էթնոմշակութային պատկանելության, անձնական կենսագրության և առաջնորդի անհատական հատկանիշների շնորհիվ կարողացավ մարգինալացնել կուսակցությունները՝ որպես քաղաքական համակարգի տարրեր, ստեղծելով իր բնութագրերով ավանդական, այդ իսկ պատճառով ***հասարակության համար ընդունելի և, հետևաբար, իր իշխանության ընթացքում կայուն քաղաքական համակարգ:***

Ինչ վերաբերում է Հայաստանի նախագահի նկատմամբ վստահության աստիճանին, ապա այն իր ոչ ընտրական փուլի «նորմի» վրա է՝ 30%, որն ունի աճի պահուստ (ռեզերվ) և

միտում Հայաստանում նախագահության այլ թեկնածուների հետ «ստիպողական» համեմատության (ընտրությունների) դեպքում[1]:

Հայկական խորհրդարանի վստահության 10% մակարդակը բացատրվում է այն հատկանիշներով, որոնք ձեռք է բերել և «հզորացրել» 1995թ. ընտրություններից ի վեր: Այդ հատկանիշների միասնական բնութագիրն է՝ ***քաղաքական համակարգի առևտրականացվածությունը,*** որի հետևանքով տեղի է ունեցել քաղաքական գործունեության ապաճում մինչև սովորական թույլ քողարկված բիզնես[2]:

Օմբուդսմենը Երևանում նշանակվել է 2004թ. մարտին, իսկ հետազոտության դաշտային փուլը տեղի է ունեցել մայիս-հունիս ամիսներին: Հետևաբար, օմբուդսմենին վստահության աստիճանը Երևանում ընդհանրապես բարձրագույն իշխանական մարմինների նկատմամբ վստահության պրոյեկցիան է ևս մեկ պետական մարմնի վրա և օմբուդսմենի պաշտոնի վերաբերյալ հասարակական քննարկումների ազդեցության հետևանք[3]:

Պրոֆիլների ավելի ուշադիր դիտարկումից պարզ է դառնում, որ Երևանում ԶԼՄ նկատմամբ վստահության աստիճանի նկատելիորեն ավելի ցածր մակարդակը Բաքվի և Թբիլիսիի համեմատությամբ պետք է առավելապես դիտարկել ոչ թե որպես Երևանի ԶԼՄ առանձնահատկություն (համեմատաբար ցածր մակարդակ), այլ Բաքվի (համեմատաբար բարձր մակարդակ): Ընդ որում՝ ավելի տարօրինակ պետք է թվա Բաքվում և Թբիլիսիում ԶԼՄ նկատմամբ վստահության մակարդակների նմանությունը, քանի որ սոցիալ-քաղաքական իրավիճակներն այդ մայրաքաղաքներում շատ տարբեր են: Այս տեսակետից կարելի է առաջ քաշել վարկած, թե Թբիլիսիում ԶԼՄ նկատմամբ վստահության մակարդակը զուգորդված է հետհեղափոխական սպասումների հետ, իսկ Բաքվում, որտեղ զանգվածային լրատվամիջոցները գտնվում են պետության խիստ վերահսկողության տակ, արևելյան հասարակություններին հատուկ օրինապահության (լոյալության) հետ:

Ուժային կառույցներից բանակի նկատմամբ վստահության բարձր աստիճանի համարյա նույն մակարդակներն ունեն տարբեր պայմանավորող գործոններ:

Երևանում այն հիմնված է բանակի հաղթանակների և տեղի ունեցող շարունակական դրական փոփոխությունների վրա, որն ուղեկցվում է արդյունավետ տեղեկատվական-քա-

---

[1] Մանուկյան Ս.Ա, «Հայաստանում 2003թ. նախագահական և պառլամենտական ընտրությունների նախնական բազային հետազոտություն», Երևան, 2002, չտպագրված: Գնահատականը ստացված է մի քանի այլընտրանքային մեթոդաբանությունների կիրառմամբ, որոնց արդյունքների միջև տարբերությունը եղել է մոտ 5%:

[2] Մանուկյան Ս.Ա, «Հայաստանում 1998թ. պառլամենտական ընտրությունների արդյունքների քանակական վերլուծություն», LINKS, 1999:

[3] Երևանում օմբուդսմենը և նրա աշխատակազմը վերջին 7 ամիսների ընթացքում շատ ակտիվ գործունեություն են ծավալել և կարելի է սպասել, որ ներկայում այդ մարմնի նկատմամբ վստահության մակարդակը էականորեն փոխված կլինի:

րոզչական ապահովմամբ, որում ընդգրկված են նաև Հայաստանի ամենահեղինակավոր մասնագիտացված ՀԿ-ները:

Թբիլիսիում բանակի նկատմամբ վստահության աճի հիմնական գործոններից կարելի է համարել նորից Մ.Սահակաշվիլու գործոնը՝ հասարակությունում, այդ թվում նրա կողմից բանակում կարգուկանոն հաստատելու վճռականությամբ, որն ուժեղացվել է ՆԱՏՕ-ի հետ վրացական բանակի կապերի աճի միտումների ազդեցությամբ:

Մնացած ուժային կառույցների (ոստիկանություն, դատախազություն) նկատմամբ վստահության աստիճանն առավել բարձր է Բաքվում, հետո՝ Թբիլիսիում և վերջում՝ Երևանում:

Բարձրագույն պետական մարմինների և ուժային կառույցների նկատմամբ վստահության աստիճանները բնութագրում են Անդրկովկասի մայրաքաղաքներում առկա էական տարբերությունները:

***Բաքվում*** առկա է կայուն ավանդական և ավտորիտար բնութագրերն ուժեղացնող պետություն, որտեղ հասարակությունը համաձայն է իր առանձնացվածությանը պետական կառավարումից: Վերնախավերի (էլիտա) միջև գերակայությունների փոփոխությունները չեն ազդում պետության բնույթի վրա:

***Թբիլիսիում*** առկա է պետության նկատմամբ վստահության կտրուկ աճի իներցիոն փուլը, որտեղ պահպանված է նախագահի նկատմամբ վստահության նախնական պաշարը:

***Երևանում*** առկա է պետության և հասարակության տարանջատվածություն, սակայն, ի տարբերություն Բաքվի, այդ իրողությունը չի խրախուսվում հասարակության կողմից:

### *Սոցիալական համակարգեր*

Սոցիալական համակարգերի նկատմամբ պատկերը նշանակալիորեն փոխված է: Երևանում՝ Բաքվի և Թբիլիսիի համեմատ, ամենաբարձրն է այդ համակարգերի արդյունավետության գնահատականը: Թբիլիսիում բարձր է օմբուդսմենի նկատմամբ վստահության մակարդակը: ԶԼՄ վստահության աստիճանը նշանակալիորեն ցածր է Երևանում: Բիզնեսի նկատմամբ վստահության մակարդակը բավական բարձր է և համարյա հավասար:

*Գծապատկեր 5-ում* տրված պետական և հասարակական ինստիտուտներին վստահության աստիճանի վերաբերյալ «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակի բաշխումները ավելի կայուն են դարձնում վերը տրված վերլուծության համատեքստը:

Հատկանշական է պետական կառավարման կառույցների նկատմամբ պատկերացումների ձևավորվածության բարձր աստիճանը բոլոր մայրաքաղաքներում և հատկապես

Թբիլիսիում, որը պայմանավորված է քաղաքական կտրուկ փոփոխությունների հետ կապված հետաքրքրվածության ընդհանուր աճով:

Պատկերացումներն առավել վատ են ձևավորված օմբուդսմենի (քանի որ այդ ինստիտուտը դեռևս նոր է) և ՀԿ-ների վերաբերյալ:

*Գծապատկեր 5.*

*Պետական և հասարակական ինստիտուտների նկատմամբ պատկերացումների ձևավորվածության աստիճանը*




| | Նախ. | Վարչ. | Պառլ. | Կուս. | Բան | Ոստ. | Դատ. | Կրթ. Հ. | Առող. Հ. | Օմբ. | Եկեղ. | ԶԼՄ | ՀԿ | Բիզ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ե | 4,3 | 4,6 | 4,9 | 8,4 | 1,5 | 3,7 | 6,1 | 3,4 | 2,2 | 28,4 | 1,8 | 3,7 | 24,7 | 10,9 |
| Բ | 1,9 | 9,1 | 6,5 | 8,3 | 4,2 | 4,8 | 6,9 | 3,8 | 3,0 | 24,6 | 7,5 | 3,0 | 25,3 | 15,3 |
| Թ | 1,0 | 3,3 | 2,4 | 4,1 | 2,9 | 1,6 | 4,2 | 2,9 | 2,6 | 11,1 | 9,4 | 1,6 | 13,7 | 9,0 |

### *Հասարակության մեջ ապահովության զգացողությունը*

Հասարակության մեջ ապահովության զգացողության վրա ազդում են գործոնների երեք խումբ՝

1. Հասարակության կառավարման մարմինների (տվյալ դեպքում՝ իրավապահ մարմինների) աշխատանքի արդյունավետությունը և նրանց նկատմամբ վստահության մակարդակը, որոնք կարելի է դիտել որպես հասարակության «արտաքին» կառավարող գործոններ, որոնք զսպում են հակահասարակական արարքները օրինական (լեգիտիմ) բռնության սպառնալիքով, դրանով իսկ մղում հասարակության անդամներին դեպի նորմատիվային վարք և նման վարքի պայմաններում բարձրացնում են նրանց ապահովության զգացողությունը:
2. Հասարակության միասնականությունը և համերաշխությունը՝ հիմնված հասարակության անդամների միասնական ինքնանույնականացման վրա: Այդ ինքնանույնականացումն ունի տարբեր մակարդակներ՝ ընտանեկան, այլ փոքր խմբային (սեփական թաղամասի ընկերներ, հարևաններ, աշխատանքային կոլեկտիվ) և մեծ խմբային

(նույն բնակավայրը, ենթամշակութային, կրոնական, ազգային, մշակութային, քաղաքակրթական): Միասնական ինքնանույնականացման գործոնների շարքում է նաև կոլեկտիվ ենթագիտակցականը, որը կազմավորվել է հասարակական (ազգային) մարմնի երկարատև գոյության ընթացքում[1]:

3. Հասարակության անդամի անհատական հոգեբանական կառուցվածքի բնութագրերը՝ խառնվածքը, տագնապալիությունը և այլն:

Հասարակության մեջ ապահովության զգացումը գնահատվել է հետևյալ հարցախմբերի միջոցով՝

*«Արդյոք Դուք ցերեկվա ընթացքում Ձեզ անվտա՞նգ եք զգում հետևյալ վայրերում»* և *«Արդյոք Դուք երեկոյան Ձեզ անվտա՞նգ եք զգում հետևյալ վայրերում»:*

Ապահովության զգացումը գնահատվել է հետևյալ վայրերում՝ տանը, սեփական թաղամասում, փողոցում, հասարակական վայրերում, մարդաշատ վայրերում, քաղաքից դուրս և աշխատավայրում:

Այս հարցախմբերի միջոցով հնարավոր է որոշակի չափով գնահատել վերը նշված առաջին գործոնների խումբը: Սակայն ստացված արդյունքները թույլ են տվել վեր հանել նաև երկրորդ խմբի գործոնների որոշակի ազդեցություն:

### *Ապահովության զգացողությունը ցերեկվա ժամերին*

Այս բնութագրիչի պրոֆիլները տրված են *Գծապատկեր 6-ում:*

Այս պրոֆիլը ցույց է տալիս վերը նշված բոլոր գործոնների համատեղ ազդեցությունը: Պրոֆիլների հիմնական առանձնահատկություններն են.

- Թբիլիսիում ապահովության ընդհանուր մակարդակն ակնհայտորեն զիջում է Բաքվին և Երևանին: Այն առավել ակնհայտ է փողոցում և հասարակական վայրում: Այդ արդյունքը հետևանք է Թբիլիսիում վերը նշված ընդհանուր անիշխանության երկարատև փուլի:
- Բաքվի և Երևանի պրոֆիլները շատ նման են իրար, բացի ապահովության զգացողությունից մարդաշատ վայրերում և քաղաքից դուրս:

[1] Юнг К.Г., Понятие коллективного бессознательного / Юнг К.Г. Аналитическая психология, М., 1995.

*Գծապատկեր 6.*

*«Արդյոք Դուք ցերեկվա ընթացքում Ձեզ անվտա՞նգ եք զգում հետևյալ վայրերում»*

Տրված են պատասխանների միջին արժեքները:

Պատասխանների հնարավոր տարբերակներն են. «Այո» - 2, «Ոչ այնքան» - 1, «Ոչ» - 0




| | Տանը | Թաղում | Փողոցում | Հաս. վայրում | Մարդաշատ վայրում | Քաղաքից դուրս | Աշխատ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| Երևան | 1,87 | 1,84 | 1,74 | 1,78 | 1,72 | 1,70 | 1,85 |
| Բաքու | 1,94 | 1,77 | 1,71 | 1,70 | 1,55 | 1,52 | 1,89 |
| Թբիլիսի | 1,75 | 1,59 | 1,31 | 1,44 | 1,38 | 1,56 | 1,61 |

Եթե այս արդյունքներին ավելացնենք *Գծապատկեր 4-ի* տվյալները՝ վստահության մակարդակը իրավապահ, դատական և պետական կառավարման մարմինների նկատմամբ, ապա ստացվում է, որ՝

• Երևանում հասարակության կառավարման արտաքին գործոնների նվազ արդյունավետության պայմաններում ստացված ապահովության զգացման բարձր մակարդակները երկրորդ խմբի գործոնների՝ հասարակության միասնական ինքնանույնականացման գործոնների արդյունք են:

### *Ապահովության զգացողությունը երեկոյան ժամերին*

Այս պրոֆիլները տրված են *Գծապատկեր 7-ում:* Դրանց առավել ցայտուն բնութագրերն են.

- երեկոյան ժամերին մայրաքաղաքներում ապահովության զգացման պրոֆիլները նկատելիորեն հեռանում են միմյանցից, որի արդյունքում՝
- ավելի ակնհայտ են դառնում Երևանում առավել բարձր ապահովության մակարդակները բոլոր դիտարկվող վայրերում (բացի տնից և աշխատավայրից, որտեղ Երևանի և Բաքվի տարբերություններն աննշան են):

Բաքվի և Թբիլիսիի պրոֆիլների համեմատությունն արդեն այնքան միարժեք չէ, ինչպես նախորդ գծապատկերում: Եթե երեկոյան ժամերին Թբիլիսիում բնակչությունն իրեն

առավել անպաշտպան է զգում ***տանը, փողոցում, հասարակական վայրում և աշխատավայրում,*** ապա Բաքվում պաշտպանվածության զգացումը ***մարդաշատ վայրում և քաղաքից դուրս*** արդեն նշանակալիորեն ցածր է Թբիլիսիից:

*Գծապատկեր 7.*

*«Արդյոք Դուք երեկոյան Ձեզ անվտանգ եք զգում հետևյալ վայրերում»*

Տրված են պատասխանների միջին արժեքները:

Պատասխանների հնարավոր տարբերակներն են. «Այո» - 2, «Ոչ այնքան» - 1, «Ոչ» - 0




### *Օրվա ժամերի ազդեցությունն ապահովության զգացման վրա*

Ապահովության զգացման վրա օրվա ժամերի ազդեցությունը առավել ակնառու պատկերելու համար *Գծապատկեր 8-ում* տրված են ցերեկվա և երեկոյան ժամերին ապահովության մակարդակների պրոֆիլների տարբերությունները:

Երեկոյան, երբ թուլանում է հասարակության արտաքին կառավարման գործոնների ազդեցությունը և աճում է բնական տագնապալիությունը, հիմնական հավասարակշռող գործոններ են դառնում անհատի և հասարակական խմբերի միջև նույնականացման գործոնները, որոնք ուղղված են ապահովության զգացողության մակարդակի պահպանմանը: Նոր ստացված պրոֆիլների հիմնական առանձնահատկություններն են.

- առավել նվազում է ապահովության զգացողությունը Բաքվում: Ընդ որում՝ այդ անկումը ամենանշանակալին է ***մարդաշատ վայրերում և քաղաքից դուրս:***
- Երևանում օրվա ժամերի ազդեցությունն առավել ցածր է:
- Թբիլիսիում օրվա ժամերի ազդեցությունը թաղում, փողոցում հասարակական վայրում նման է Բաքվին, իսկ մարդաշատ վայրերում և քաղաքից դուրս՝ Երևանին:

*Գծապատկեր 8.*

*Տարբեր վայրերում ապահովության մակարդակների տարբերությունները ցերեկը և երեկոյան*

Տրված են պատասխանների միջին արժեքները. 2 – համապատասխանում է «Այո», 1 – «Ոչ այնքան», 0 – «Ոչ» պատասխաններին




Թվում է, թե Բաքվում մարդաշատ վայրերում և քաղաքից դուրս ապահովության զգացման կտրուկ անկումը կարելի է բացատրել հետազոտության դաշտային փուլից ընդամենը կես տարի առաջ նախագահական ընտրությունների ընթացքում տեղի ունեցած զանգվածային հուզումներով: Սակայն միայն դա բավարար չէ, քանի որ զանգվածային հուզումներ տեղի են ունեցել և՛ Երևանում, և՛ Թբիլիսիում: Ըստ երևույթին, դա կապված է զանգվածային հուզումների որակական հատկանիշների հետ:

Բաքվում զանգվածային հուզումները, որպես կանոն, ուղեկցվում են բռնություններով, ջարդարարությամբ և արյունահեղությամբ: Ընդ որում՝ այդ բնութագիրը խիստ դրական է զուգորդված հուզումների ընթացքում թիրախավորված «թշնամու» կերպարի դիստանցիայով ամբոխի ինքնանույնականացման կերպարից: Էթնիկ և կրոնական մեծ դիստանցիաները պայմանավորել են, օրինակ՝ 1988թ. Սումգայիթում, 1989թ. Կիրովաբադում և 1991թ. Բաքվում հայերի դեմ իրականացված զանգվածային բռնությունները:

Ամբոխային վարքի այս բնութագիրն առավելապես էթնոհոգեբանական է[1]:

Ամբոխային վարքի վտանգավորությունը նշանակալի կերպով աճում է նաև այն իրավիճակներում, երբ պետական իրավապահ մարմինները վատ են կատարում իրենց գործառույթները կամ թուլանում են սոցիալական խմբի ներխմբային նույնականացման կապերը: Բաքվում, երբ հավանական է պետական և փոքր խմբային վերահսկողության

[1] Лурье М., Метаморфозы традиционного сознания, С-П, 1996.

թուլացումը, շեշտակի աճում է անապահովության զգացումը՝ երեկոյան ժամերին մարդաշատ վայրերում և քաղաքից դուրս:

Երևանում օրվա ժամերի ազդեցության ցածր մակարդակը կարելի է բացատրել ազգային ինքնանույնականացման բարձր մակարդակով, որն անդրադառնում է նաև այլ խմբերի վրա և բարձրացնում է ապահովության ընդհանուր զգացողությունը:

Թբիլիսիում ապահովության զգացողության մեծ անկումը թաղում և փողոցում կարող է բացատրվել վերջին 15 տարիներին իրավապահ մարմինների թուլությամբ և կոնկրետ հանցագործությունների (գողություն, խուլիգանություն) բարձր մակարդակով: Սակայն մեծ խմբերում այստեղ նույնպես սկսում է ազդեցություն գործել ազգային ինքնանույնականացման բարձր մակարդակը, և օրվա ժամերի հետ զուգորդված գործոնների ազդեցությունը նվազում է:

### *Ապահովության զգացման կախվածությունը սոցիալական խմբերի չափից*

Քանի որ *Գծապատկեր 8-ից* ակնհայտ է ազգային ինքնանույնականացման նշանակալի ազդեցությունը ապահովության մակարդակի վրա, փորձենք առավել «մաքուր» տեսքով դիտարկել սոցիալական դիստանցիայի ազդեցությունը ապահովության մակարդակի վրա: Դրա համար *Գծապատկեր 9-ում* տրված են ապահովության մակարդակների փոփոխությունների պրոֆիլները՝ կախված սոցիալական համատեքստի չափերից: Այստեղ առավել ակնառու է երևում սոցիալական խմբերի չափերի մեծացման դեպքում (երբ նվազում են ներխմբային նույնականացման կապերը) ապահովության մակարդակի կտրուկ նվազումը:

*Գծապատկեր 9-ի* ամենանշանակալի արդյունքը զուգորդված է երեկոյան ժամերին Բաքվի մարդաշատ վայրերում և քաղաքից դուրս ապահովվածության զգացողության շատ մեծ անկման հետ: Կարելի է ենթադրել, որ.

Հ. Երեկոյան ժամերին, երբ թուլանում է հասարակության արտաքին կառավարման գործոնների ազդեցությունը,

- մարդաշատ վայրերում ազգը «տարրալուծվում» է, մարդիկ կորցնում են համախմբող նույնականացումը,
- քաղաքից դուրս ազգը «տրոհվում» է, մայրաքաղաքի բնակիչներն իրենց խստորեն տարանջատում են այլ վայրերի բնակիչներից:

*Գծապատկեր 9.*

*Ապահովվածության զգացողության անկումը տարբեր հասարակական խմբերում*

(0.00-ն համապատասխանում է ապահովվածության զգացողությանը տանը): Տարբերությունների սանդղակը՝ 1.00-ն, համապատասխանում է ապահովության զգացման «Այո» տարբերակի նվազմանը մինչև «Ոչ այնքան», կամ՝ «Ոչ այնքան» տարբերակի նվազմանը մինչև «Ոչ»:




Պետական և հասարակական ինստիտուտների նկատմամբ վստահության մակարդակների վկայակոչումը *(Գծապատկեր 4)* մեկ այլ հիմնավորում է տալիս մայրաքաղաքներում անվտանգության զգացողության մակարդակների դիտարկման ընթացքում Բաքվում դիտված էթնոհոգեբանական առանձնահատկություններին:

Բաքվում վստահության բարձր մակարդակները պետական և իրավապահ մարմինների նկատմամբ պետք է որ ազդեցություն գործած լինեին ապահովության զգացման **ամբողջ պրոֆիլի** վրա: Սակայն այդ ազդեցությունը դիտվել է պրոֆիլի բոլոր տարրերում, բայց ոչ **մարդաշատ վայրերում և քաղաքից դուրս** ապահովության զգացողության մակարդակների վրա:

Սա նշանակում է, որ տվյալ դեպքում գործ ունենք **էթնիկ հաստատունների** յուրահատուկ արտահայտության հետ այն իրավիճակում, երբ **ֆիզիկապես** բացակայում է էթնիկ և կրոնական «թշնամական» տարրը, որի հետևանքով բնութագիրն անդրադառնում է հասարակության՝ որպես ամբողջության, իրենից իսկ պաշտպանվածության զգացողության մակարդակի վրա: Տեղի է ունենում ազգային ինքնանույնականացման էրոզիա, և այն դադարում է իրականացնել համախմբող գործառույթ:

Դիտված առանձնահատկությունները Բաքու քաղաքի և Ադրբեջան պետության մնացած մասի միջև պատմականորեն առաջացած դիստանցիայի արտահայտություններն են:

Բաքուն, որպես բազմազգ մեգապոլիս, արդյունաբերական, մշակութային կենտրոն, որը կազմավորվել է Անդրկովկասի բնիկ ազգերի՝ առաջին հերթին հայերի, ինչպես նաև Ռուսական, իսկ հետագայում խորհրդային կայսրությունների տիրապետության ընթացքում, ռուսների և հրեաների գործունեության արդյունքում, միշտ առանձնացված է եղել Ադրբեջանի գավառներից և՛ մշակութային, և՛ սոցիալ-տնտեսական տեսակետներից: Իր բնույթով սա շատ նման է Օսմանյան կայսրությունում Կոստանդնուպոլսի թուրքերի և կայսրության թրքախոս ցեղերի փոխհարաբերություններին:

## *Քաղաքական վարքի բնութագրեր*

### *Քաղաքականությամբ հետաքրքրվածության աստիճանը*

Հարավկովկասյան մայրաքաղաքների բնակչության հետաքրքրվածության մակարդակների համեմատության համար կիրառվել են՝

*Բ.1. «Հետաքրքրո՞ւմ է Ձեզ արդյոք քաղաքականությունը» և*

*Բ.2. «Որքա՞ն հաճախ եք Դուք զրուցում քաղաքականության մասին»*

*հարցերը:*

Այս հարցերի երկչափ բաշխումները տրված են *Աղյուսակ 12-ում:*

*Աղյուսակ 12.*

*Քաղաքականությամբ հետաքրքրվածության աստիճանը հարավկովկասյան մայրաքաղաքներում*

| | **«Հետաքրքրո՞ւմ է Ձեզ արդյոք քաղաքականությունը»** | **«Որքա՞ն հաճախ եք Դուք խոսում քաղաքականության մասին»** | | |
|---|---|---|---|---|
| | | *«Երբեք» կամ «Հազվադեպ»* | *«Հաճախ» կամ «Շատ հաճախ»* | ***Ընդամենը*** |
| **Երևան** | *«Ոչ» կամ «Հազվադեպ»* | **46.8%** | 2.4% | **49.2%** |
| | *«Երբեմն» կամ «Շատ»* | 15.2% | **35.6%** | **50.8%** |
| | ***Ընդամենը*** | **62.0%** | **38.0%** | **100.0%** |
| **Բաքու** | *«Ոչ» կամ «Հազվադեպ»* | **67.90** | 0.4% | **68.3%** |
| | *«Երբեմն կամ «Շատ»* | 12.6% | **19.1%** | **31.7%** |
| | ***Ընդամենը*** | **80.5%** | **19.5%** | **100.0%** |
| **Թբիլիսի** | *«Ոչ» կամ «Հազվադեպ»* | **24.3%** | 2.0% | **26.3%** |
| | *«Երբեմն» կամ «Շատ»* | 29.3% | **44.3%** | **73.6%** |
| | ***Ընդամենը*** | **53.6%** | **46.3%** | **100.0%** |

Քաղաքականությամբ հետաքրքրվածության աստիճանն ակնհայտորեն ավելի բարձր է Թբիլիսիում, որին հետևում է Երևանը: Բաքվում այն նշանակալիորեն զիջում է առաջին երկուսին. այստեղ բնակչության 2/3-ը չի հետաքրքրվում կամ հազվադեպ է հետաքրքրվում

քաղաքականությամբ և, միաժամանակ, երբեք չի խոսում կամ հազվադեպ է խոսում քաղաքականության մասին:

### *Քաղաքականության մասին տեղեկությունների աղբյուրները*

Ներքաղաքական տեղեկությունների ստացման աղբյուրներն ըստ կարևորության նշված են *Աղյուսակ 13-ում:*

*Աղյուսակ 13.*
*Որո՞նք են տեղական քաղաքական նորությունների վերաբերյալ Ձեր տեղեկությունների ստացման հիմնական աղբյուրները (գնահատված են կարևորության կարգերը. 1 - ամենաբարձր կարևորություն, 0 – տեղեկությունների տվյալ աղբյուրը չի նշված)*

| | | Հեռ. | Ռադիո | Լրագիր | Ինտեր. | Ընտ. անդամ. | Հարևան., ընկերներ | Աշխատ. ընկերներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Երևան | 1 | 86.7% | 3.8% | 3.5% | .9% | .3% | 1.9% | 1.0% |
| | 2 | 7.0% | 18.0% | 16.6% | 2.3% | 7.1% | 10.1% | 4.2% |
| | 3 | .7% | 3.9% | 8.9% | .5% | 6.7% | 7.3% | 3.5% |
| | 4 | .1% | .3% | .7% | .4% | 1.6% | 3.5% | 2.3% |
| | 5 | | | | .1% | .6% | .8% | .5% |
| | 6 | | | .1% | | | .2% | .3% |
| | 7 | | | | | | | .1% |
| | 0 | 5.5% | 74.0% | 70.1% | 95.9% | 83.7% | 76.1% | 88.0% |
| Ընդ. | | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% |
| Բաքու | 1 | 95.2% | 1.8% | .8% | .2% | .3% | 1.1% | .1% |
| | 2 | 2.4% | 32.3% | 15.5% | 1.2% | 8.3% | 4.6% | 2.1% |
| | 3 | .1% | 8.3% | 13.4% | .7% | 6.9% | 4.7% | 2.4% |
| | 4 | | .5% | .5% | 2.8% | 4.9% | 4.2% | 1.7% |
| | 5 | .3% | .5% | .4% | .9% | 2.3% | 2.4% | 1.2% |
| | 6 | | .2% | .5% | .5% | .3% | 1.5% | .7% |
| | 7 | | .2% | .1% | .3% | | | 1.7% |
| | 0 | 1.9% | 56.1% | 68.8% | 93.4% | 77.0% | 81.5% | 90.1% |
| Ընդ. | | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% |
| Թբիլիսի | 1 | 95.9% | 1.0% | 2.0% | .1% | .1% | .5% | .5% |
| | 2 | 3.1% | 11.8% | 43.2% | 1.0% | 3.8% | 7.4% | 2.7% |
| | 3 | .1% | 4.4% | 7.3% | 1.3% | 7.2% | 9.6% | 4.3% |
| | 4 | | .1% | .4% | .6% | 3.1% | 4.6% | 2.3% |
| | 5 | | .2% | .2% | .2% | .7% | 1.3% | 1.2% |
| | 6 | | .3% | .1% | .1% | .4% | .1% | .5% |
| | 7 | | | | .3% | | | |
| | 0 | 1.0% | 82.2% | 46.7% | 96.5% | 84.7% | 76.6% | 88.5% |
| Ընդ. | | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% |

Բոլոր մայրաքաղաքներում հեռուստատեսությունը ամենակարևոր տեղեկատվական աղբյուրն է, որն իր նշանակությամբ բազմակի գերազանցում է մյուս բոլոր տեղեկատվական աղբյուրներին: Ընդ որում՝ այն Երևանի համեմատ ավելի նշանակալի աղբյուր է Բաքվում և Թբիլիսիում:

Թբիլիսիում ակնհայտորեն ավելի բարձր է լրագրերի նշանակությունը՝ որպես ներքաղաքական տեղեկությունների լրացուցիչ աղբյուր, Երևանում և Բաքվում լրագրերի նշանակությունը համարյա նույնն է:

Բաքվում կարևորությամբ երկրորդ աղբյուրը ռադիոն է, որի նշանակությունը՝ որպես լրացուցիչ աղբյուր, Բաքվում կրկնակի բարձր է Երևանից և եռակի՝ Թբիլիսիից:

Ինտերնետը՝ որպես ներքաղաքական տեղեկությունների աղբյուր, մնում է շատ ցածր մակարդակի վրա: Եթե Երևանում այն ավելի հաճախ է հանդես գալիս որպես տեղեկությունների՝ կարևորությամբ երկրորդ աղբյուր, ապա Բաքվում դրանից ավելի շատ են օգտվում:

Միջանձնական հաղորդակցության աղբյուրին մեծ նշանակություն են տալիս բոլոր երեք մայրաքաղաքներում[1]: Ընդ որում՝ այդ աղբյուրի միջոցով տեղեկությունների փոխանակմանն առավել հակված են Երևանում (40.7%, այսինքն՝ իր տարածվածությամբ երկրորդն է՝ հեռուստատեսությունից հետո), քան Թբիլիսիում (37.0%, երրորդ տեղում է՝ հեռուստատեսությունից և լրագրերից հետո) և Բաքվում (34.4%, երրորդ տեղում է՝ հեռուստատեսությունից և ռադիոյից հետո):

Երեք մայրաքաղաքներում էլ ներքաղաքական տեղեկությունների հիմնական աղբյուրը հեռուստատեսությունն է: Բաքվում երկրորդ աղբյուրը ռադիոն է, Թբիլիսիում՝ մամուլը, իսկ Երևանում այդ երկու աղբյուրները գրեթե հավասար նշանակություն ունեն: Միջանձնական հաղորդակցության աղբյուրը շատ նշանակալի է բոլոր մայրաքաղաքներում: Դրանով տեղեկություններ ամենից շատ փոխանակում են Երևանում (40.7%), հետո Թբիլիսիում (37.0%) և Բաքվում (34.4%): Ինտերնետն իր նշանակությամբ շատ է զիջում տեղեկատվության մյուս աղբյուրներին: Այս առումով նրա նշանակությունը՝ որպես ներքաղաքական տեղեկությունների երկրորդ աղբյուր, ավելի բարձր է Երևանում, սակայն ավելի տարածված է Բաքվում:

---

[1] Բնական է, որ այդ միջոցը չի հանդիսանում առաջնային տեղեկությունների աղբյուր, այդ պատճառով այն «հանգրվանել» է ցածր կարգերում: Սակայն դրանց գումարային տոկոսը, փաստորեն, ***երկրորդ տեղում է հեռուստատեսությունից հետո:***

## *Քաղաքական գծի գնահատականներ և քաղաքական ակտիվություն*

*Գծապատկեր 10.*

*«Ձեր կարծիքով, երկրում զարգացումները ո՞ր ուղղությամբ են ընթանում»*




*Գծապատկեր 10-ում և 11-ում* տրված են.

Բ.9. *«Ձեր կարծիքով, զարգացումները երկրում ընդհանուր առմամբ ո՞ր ուղղությամբ են ընթանում»:*

Բ.8. *«Վերջին 12 ամիսների ընթացքում մասնակցե՞լ եք արդյոք որևէ զանգվածային քաղաքական գործունեության (օրինակ՝ քաղաքական ցույց, հանրահավաք, բողոք և այլն)»*

հարցերին տրված պատասխանների բաշխումները:

*Գծապատկեր 11.*

*«Վերջին 12 ամիսների ընթացքում մասնակցե՞լ եք արդյոք զանգվածային քաղաքական գործունեության»*



Գծապատկերից ակնհայտ է, որ այնտեղ, որտեղ հուզումների մասնակիցները հասել են հաջողության (Թբիլիսի), հարցումների ընթացքում ավելի շատ անձինք են հաստատել իրենց մասնակցությունը զանգվածային գործողություններին: Իսկ այնտեղ, որտեղ զանգվածային գործողությունների մասնակիցները հաջողության չեն հասել, ավելի քիչ մարդիկ են նշել իրենց մասնակցությունն այդպիսի գործողությունների: Հատկանշական է, որ Երևանում ավելի շատ անձինք են հաստատել իրենց մասնակցությունը զանգվածային գործողություններին, քան Բաքվում:

Արդյո՞ք երկրում զարգացումների վերաբերյալ դիրքորոշումներն ազդել են զանգվածային գործողություններին մասնակցության մակարդակի վրա:

*Գծապատկեր 12.*
*Մեկից ավելի անգամ զանգվածային գործողությունների մասնակցած անձանց թվի կախվածությունը երկրում զարգացումների նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունից*




Այս մասին տեղեկություններ են պարունակվում *Գծապատկեր 12-ում:* Թբիլիսիում այդ կապը շատ հստակ է: «Վարդերի հեղափոխության» ընթացքում հաղթել է հասարակության այն հատվածի ներկայացուցիչը, որը եռանդուն մասնակցել է զանգվածային գործողություններին: Սակայն Երևանում և Բաքվում, որտեղ զանգվածային գործողությունների մասնակիցների պաշտպանած թեկնածուները չեն հաղթել, նույն *Գծապատկեր 12-ում* առկա են իրար հակառակ պատկերներ: Երևանում զանգվածային գործողություններին մասնակցության մասին նշել են այն անձինք, ովքեր բացասաբար են տրամադրված երկրում ընթացող զարգացումների նկատմամբ, իսկ Բաքվում չեն հանդիպել մարդիկ, ովքեր, բացասաբար գնահատելով երկրում ընթացող զարգացումները, միաժամանակ նշել են

իրենց մասնակցության մասին զանգվածային գործողություններին: Եվ հակառակը՝ զանգվածային գործողություններին իրենց մասնակցության մասին են հայտնել նրանք, ովքեր համարում են, որ երկրում զարգացումներն ընթանում են ճիշտ ուղղությամբ:

Այս փաստը հիմքեր է տալիս ենթադրելու, որ Բաքվում մարդիկ խուսափում են արտահայտել իրենց ընդդիմադիր դիրքորոշումները: Այս փաստի այլ հիմնավորումներ վեր հանելու համար կատարենք առկա տվյալների վրա հիմնված փորձարկում: Այս փորձարկման նախնական կանխադրույթներն են.

P1. Երկրի զարգացումների վերաբերյալ քաղաքացիների գնահատականները զուգորդված են պետության նախագահի նկատմամբ վստահության աստիճանի հետ:

P2. Որքան ավելի դրական է գնահատվում երկրում ընթացող զարգացումների ուղղությունը, այնքան ավելի բարձր է երկրի նախագահի նկատմամբ վստահության աստիճանը:

Առաջադրվում է վարկած.

H1. Եթե քաղաքացին չունի ձևավորված կարծիք երկրում ընթացող զարգացումների մասին, ապա, մնացած հավասար պայմաններում, երկրի նախագահի նկատմամբ վստահության աստիճանի բաշխումը համաչափ (սիմետրիկ) է չեզոք դիրքորոշմանը:

*Գծապատկեր 13.*

*Երկրի նախագահին վստահող, չվստահող և վստահության նկատմամբ ձևավորված գնահատական չունեցող անձանց թիվն այն անձանց մեջ, ովքեր ձևավորված կարծիք չունեն երկրում ընթացող զարգացումների վերաբերյալ*




Այլ խոսքերով՝ եթե քաղաքացին չգիտի, թե դեպի ուր է գնում երկիրը, ապա, մնացած հավասար պայմաններում, հավասար հավանական պետք է դիտել նրա կողմից երկրի

նախագահին վստահելու կամ չվստահելու դիրքորոշումը, իսկ վերջինս բնութագրվում է հավանականությունների խտության բաշխման համաչափ գործառույթով:

Վարկածի ստուգման արդյունքները ներկայացված են *Գծապատկեր 13-ում,* որտեղ ներկայացված է երկրի նախագահին վստահության աստիճանի բաշխումը այն անձանց մոտ, ովքեր չունեն ձևավորված պատկերացումներ երկրում ընթացող զարգացումների վերաբերյալ:

Գծապատկերից երևում է, որ Երևանում այդ հարաբերությունը համարյա հավասար է 1-ի: Սա նշանակում է, որ Երևանի քաղաքացիների մոտ՝ երկրում զարգացումների վերաբերյալ իրատեսական պատկերացումների բացակայության պայմաններում գոյություն չունեն նշանակալի գործոններ, որոնք ազդում են նախագահի նկատմամբ վերաբերմունքի վրա[1]:

Թբիլիսիում այդ հարաբերությունը մոտավորապես 8.7 է, Բաքվում՝ 32.7: Հետևաբար, Թբիլիսիում և Բաքվում ***գոյություն ունեն գործոններ, որոնք ազդում են նախագահի նկատմամբ վերաբերմունքի բաշխման վրա, այն է՝ նշանակալիորեն բարձրացնում են նրա նկատմամբ վստահության աստիճանը:***

Վեր հանված վստահության աճի բնույթը սահմանելու համար անհրաժեշտ է վկայակոչել Թբիլիսիում և Բաքվում զարգացումների բովանդակությունները:

Թբիլիսիում Մ.Սահակաշվիլու նկատմամբ վերաբերմունքում «իռացիոնալ» վստահության աճը պայմանավորված է հաղթանակած հեղափոխության հետևանքով նրա նկատմամբ առաջացած «վստահության վարկով»: Այս դեպքում «իռացիոնալ վստահություն»/«իռացիոնալ անվստահություն» հարաբերությունը կարելի է մեկնաբանել որպես Թբիլիսիում Մ.Սահակաշվիլու նկատմամբ «վստահության վարկի» քանակական գնահատական:

Բաքվում՝ նախագահական ընտրություններում ընդդիմության զանգվածային գործողությունները անհաջողության մատնվեցին: Մյուս կողմից՝ հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ Բաքվի բնակչությունը խուսափում է ընդդիմադիր դիրքորոշում արտահայտելուց: Հետևաբար Բաքվում «իռացիոնալ վստահություն»/«իռացիոնալ անվստահություն»=32.0 հարաբերությունը կարելի է մեկնաբանել որպես Բաքվում Ալիևի նկատմամբ «արտաքին օրինապահություն» գործոնի գնահատական:

Ասվածը նշանակում է, որ Ալիևի նկատմամբ «օրինապահության» գործոնը գերակշռում է Սահակաշվիլու նկատմամբ «վստահության վարկ» գործոնին:

---

[1] Գծապատկերից երևում է, որ կարելի է ենթադրել նախագահին չվստահելու որոշակի միտման մասին, որը կապված չէ երկրում ընթացող զարգացումների հետ, սակայն տվյալ կտրվածքում տվյալների սղությունը հիմքեր չի տալիս ենթադրելու, որ դա ***պատահական շեղման*** հետևանք չէ:

### *Մասնակցությունը նախագահական և խորհրդարանական ընտրություններին*

*Գծապատկեր 14-ում* տրված են հարավկովկասյան մայրաքաղաքներում վերջին նախագահական և խորհրդարանական ընտրություններին մասնակցության աստիճանները:

Հատկանշական է նախագահական և խորհրդարանական ընտրություններում ակտիվության մեծ տարբերությունը Բաքվում՝ 28.3% և դրա համեմատ՝ նշանակալիորեն փոքր տարբերությունները Թբիլիսիում՝ 4.3% և Երևանում՝ 7.2%:

Սա նշանակում է, որ չնայած Թբիլիսիում և Երևանում խորհրդարանների նկատմամբ վստահության աստիճանը նշանակալիորեն զիջում է նախագահների նկատմամբ վստահության աստիճաններին, իսկ Երևանում այն նաև շատ ցածր է իր բացարձակ արժեքով, սակայն այս հասարակություններն իրար նման են այն տեսակետից, որ.

*Т. Թբիլիսիում և Երևանում գոյություն ունի ներկայացուցչական ժողովրդավարության կարևորության բարձր գնահատական,*

իսկ

*Т. Բաքվում շատ ավելի բարձր է ավտորիտար իշխանության արժևորումը:*

*Գծապատկեր 14.*
*Մասնակցությունը վերջին խորհրդարանական և նախագահական ընտրություններին*




Այս իրողությունները նույնպես մի կողմից՝ Թբիլիսիի և Երևանի հասարակությունների քաղաքակրթական նմանության բնութագիրն են ներկայացնում, մյուս կողմից՝ դրանց և Բաքվի հասարակությունների միջև էական քաղաքակրթական տարբերության բնութագիրը:

## *Հարավային Կովկասում ինտեգրացիոն հնարավորությունները հասարակական կարծիքում*

### *Ներկովկասյան համագործակցություն*

Հարավկովկասյան ***երեք*** *երկրների* համագործակցությունն այդ երկրների մայրաքաղաքների հասարակությունների վերաբերմունքի տեսակետից մնում է խնդրահարույց: Հատկանշական է, որ մայրաքաղաքների հասարակությունները չեն տարբերակում քաղաքական և տնտեսական հարաբերությունները, որոնց բաշխումները համարյա նույնն են: *Գծապատկեր 15-ում* տրված է մայրաքաղաքներում այն անձանց թիվը, որոնք «Լիովին դեմ» կամ «Մասամբ դեմ» են տնտեսական համագործակցությանը երկու հարևան երկրներից յուրաքանչյուրի հետ:

Հարավկովկասյան համագործակցության հնարավոր «կամուրջը» մնում է Վրաստանը: Երևանի հասարակական կարծիքում համագործակցության հնարավորությունն Ադրբեջանի հետ ունի աճի միտում: Բաքվի հասարակությունը կտրականապես դեմ է Հայաստանի հետ համագործակցությանը:

Օրինաչափ հարց է առաջանում՝

*Q. Արդյո՞ք վերաբերմունքը հարևան պետության հետ համագործակցության նկատմամբ այդ հարևան պետության հիմնական ազգի նկատմամբ հասարակության վերաբերմունքի պրոյեկցիան է:*

*Աղյուսակ 14-ի* տվյալներն այս հարցին տալիս են դրական պատասխան: Երևանում և Թբիլիսիում հասարակության դրական և չեզոք վերաբերմունքների գումարը դիտարկվող ազգի նկատմամբ համարյա համընկնում է այդ ազգին համապատասխանող երկրի հետ համագործակցությանը «Լիովին կողմ» և «Մասամբ կողմ» վերաբերմունքների գումարային գնահատականներին[1]:

Երևանում Ադրբեջանի հետ հարաբերությունների հաստատմանը կողմ և դեմ վերաբերմունքները համարյա հավասար են, սակայն եթե «Լիովին դեմ» վերաբերմունքը գերակշռում է «Մասամբ դեմ»-ին, ապա «Լիովին կողմերը» զիջում են «Մասամբ կողմ»-ին:

Բաքվում Հայաստանի հետ հարաբերությունների հաստատումը բացարձակապես մերժելի է, ինչը պայմանավորված է պաշտոնական Բաքվի արդեն 15 տարի շարունակվող և ուժգնացող հակահայկական քարոզչությամբ և իշխանությունների նկատմամբ Բաքվի բնակչության արդեն դիտված օրինապահությամբ:

---

[1] Բաքվի համար այդ պնդումը մնում է որպես վարկած, քանի որ ադրբեջանական կողմը չի ներկայացրել Բաքվում հայերի և վրացիների նկատմամբ վերաբերմունքների մասին տվյալներ:

*Գծապատկեր 15.*

*Հարևան Հարավկովկասյան երկրների հետ տնտեսական համագործակցությանը «Լիովին դեմ» կամ «Մասամբ դեմ» անձանց թիվը*




*Աղյուսակ 14.*

*Հարավկովկասյան տնտեսական համագործակցությանը «Լիովին կողմ» և «Մասամբ կողմ» վերաբերմունքների հարաբերակցությունը*

| | Հայաստան | | Ադրբեջան | | Վրաստան | |
|---|---|---|---|---|---|---|
| | Տնտ. հարաբ. | Վերաբերմ. ազգի նկատ. | Տնտ. հարաբ. | Վերաբերմ. ազգի նկատ. | Տնտ. հարաբ. | Վերաբերմ. ազգի նկատ. |
| Երևան | * | * | 47.9% | 43.2% | 78.0% | 78.3% |
| Բաքու | 0.9% | - | * | * | 81.8% | - |
| Թբիլիսի | 92.0% | 92.0% | 93.4% | 91.0% | * | * |

*Տնտ. հարաբ. – տվյալ մայրաքաղաքում հարցվողների տոկոսը, որոնք «Լիովին կողմ» կամ «Մասամբ կողմ» են տվյալ երկրի հետ տնտեսական հարաբերություններին:*
*«Վերաբերմ. ազգի նկատ.» - տվյալ մայրաքաղաքում հարցվողների տոկոսը, որոնք «Դրական» կամ «Չեզոք» վերաբերմունք ունեն տվյալ ազգի նկատմամբ:*

Թբիլիսիում Հայաստանի և Ադրբեջանի հետ հարաբերությունների հաստատման նկատմամբ վերաբերմունքը հավասարազոր է և դրական, այսինքն՝ Վրաստանը մնում է Հարավային Կովկասում համագործակցության նախաձեռնության կամուրջը:

### *Արտաքին տնտեսական և քաղաքական համագործակցություն*

Հարցաթերթում առկա էր հետևյալ հարցը.

*«Ո՞ր երկրների հետ Ձեր երկիրը պետք է համագործակցի՝ ա) տնտեսական ոլորտում, բ) քաղաքական ոլորտում»:*

Բացահայտորեն նշված էին Ռուսաստան, ԱՄՆ, Եվրամիություն, Իրան, Թուրքիա տարբերակները, սակայն հարցվողը կարող էր իր հայեցողությամբ ավելացնել այլ երկրներ: Կիրառված էր գնահատման կարգային սանդղակ:

Պարզվեց, որ տվյալ երկրի հետ քաղաքական և տնտեսական համագործակցության գերակայությունները շատ ուժեղ զուգորդված են: Այդ պատճառով *Գծապատկեր 16-ում* տրված են բացահայտորեն նշված երկրների հետ տնտեսական համագործակցությունն առաջին տեղում նշած հարցվողների հարաբերական թվերը:

Ռուսաստանը հարավկովկասյան մայրաքաղաքների բնակչության համար մնում է առաջին ցանկալի գործընկերը մոտավորապես Երևան:Թբիլիսի:Բաքու=90%:70%:50% հարաբերությամբ: Հատկանշական է, որ եթե Բաքվում գերակշռում է Ռուսաստանի հետ տնտեսական հարաբերությունների գերակայությունը քաղաքական հարաբերությունների նկատմամբ, ապա Թբիլիսիում գերակշռում են քաղաքական հարաբերությունները:

Այստեղ որոշակիորեն անսպասելի արդյունք կարելի է համարել այն, որ Թբիլիսիում Ռուսաստանի հետ հարաբերությունների կարևորությունը առաջին տեղում է: Սա ճշգրտում է քաղաքագիտական շրջանակներում շրջանառվող այն մտայնությունը, թե Վրաստանի և առավելապես Թբիլիսիի բնակչությունը հակված է Եվրամիության հետ համագործակցությանը: Անշուշտ, այդ մտայնությունը ներկայացնում է քաղաքական շրջանակների եվրոպական կողմնորոշման տեղեկատվական մակածումը ամբողջ հասարակության վրա: Սակայն ավելի կարևոր է այն, որ նման մակածման «հակառակ կողմը» նշանակում է, որ Թբիլիսիի հասարակության և քաղաքական ընտրախավի կողմնորոշումների միջև առկա է էական հակադրություն, որն, ինչ խոսք, կարող է որոշակի պայմաններում ունենալ այլընտրանքային հասարակական-քաղաքական գործընթացների նախաձեռնման ներուժ:

Էականորեն տարբերվում են «երկրորդ» գործընկերները. Հայաստանում՝ ԵՄ, Թբիլիսիում՝ ԱՄՆ, Բաքվում՝ Թուրքիա: Որպես սրա խորհրդանշական մեկնաբանություն՝ կարելի է ասել, որ Թբիլիսիում «երկրորդ» գործընկերոջ մոտ գնահատվում է «ուժը» (ի հավասարակշռություն «առաջին» գործընկերոջ հետ բարդ հարաբերությունների), իսկ Երևանում և Բաքվում՝ մոտ «քաղաքակրթությունը»:

«Երրորդ» գործընկերներն են Երևանի և Բաքվի համար՝ ԱՄՆ-ը, Թբիլիսիի համար՝ ԵՄ-ը: Այսինքն՝ առաջին երկուսի համար էականը «գլոբալ ուժն» է, առանց որի հնարավոր չէ «ժամանակակից աշխարհը», իսկ երրորդի համար՝ քաղաքակրթական կողմնորոշումը:

*Գծապատկեր 16.*

*ՌԴ-ի, ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Իրանի և Թուրքիայի հետ տնտեսական համագործակցության կարևորությունն առաջին տեղում նշած անձանց թիվը*




| | ՌԴ | ԱՄՆ | ԵՄ | Իրան | Թուրքիա |
|---|---|---|---|---|---|
| Երևան | 89,70% | 12,50% | 14,40% | 6,90% | 6,80% |
| Բաքու | 48,70% | 23,90% | 25,10% | 11,40% | 39,00% |
| Թբիլիսի | 75,00% | 20,30% | 15,10% | 1,90% | 1,30% |

Ուշագրավ է «հարավային» հարևանների հետ հարաբերությունների նկատմամբ վերաբերմունքի բաշխումը: Վրաստանը Թուրքիայի հետ Հարավկովկասյան երկրների տնտեսական հարաբերությունների հաշվառվող և չհաշվառվող տարանցման երկիր է, մյուս կողմից՝ նրա հետ ունի ակնհայտորեն ամենամեծ ապրանքաշրջանառությունը և արդեն «հագեցել» է այդ գործընկերությունից: Թուրքիային առաջին գործընկերոջ դերում տեսնում է Թբիլիսիի բնակչության ընդամենը 1.3%-ը: Այս առումով Թուրքիան զիջում է նույնիսկ Իրանին[1]:

Ուշագրավ է, որ Բաքվում Իրանը դիտվում է (երկրների տվյալ համակցությունում) որպես վերջին գործընկեր, չնայած Ադրբեջանն ունի Իրանի հետ ամենաերկար սահմանը և ամենամեծ ***կրոնամշակութային*** ընդհանրությունը[2]:

Հատկանշական է նաև, որ արգելակված է նաև Հայաստանի և Իրանի հետ հարաբերությունների զարգացումը և՛ բնակչության գնահատականներում, և՛ փաստացի Հայաստանի արտաքին առևտրում, որտեղ Իրանը Հայաստանի համար 5-րդ գործընկերն է, չնայած շրջափակման պայմաններում Իրանն է ապահովում արտաքին աշխարհի հետ Հայաստանի ցամաքային ամենահուսալի ճանապարհը:

[1] Այս տվյալների բազայի և նման փոքր տոկոսային հարաբերակցությունների համար ընտրանքային սխալը կազմում է մոտ 0.5%:

[2] Այստեղ ձեռնպահ ենք մնում քաղաքագիտական մեկնաբանություններից:

Այս տվյալների մեկնաբանության այլ չափողականությունը դիտելու համար ներկայացնենք Հարավային Կովկասի երկրների արտաքին առևտրի հիմնական ուղղությունները 2003թ. տվյալներով (*Աղյուսակ 15*):

*Աղյուսակ 15.*

*Հարավային Կովկասի երկրների արտաքին առևտրի հիմնական գործընկեր երկրները (2003թ. գնահատականներ)*

| | Հայաստան | | Ադրբեջան | | Վրաստան | |
|---|---|---|---|---|---|---|
| Երկիր | *Արտահ.* | *Ներմուծ.* | *Արտահ.* | *Ներմուծ.* | *Արտահ.* | *Ներմուծ.* |
| Բելգիա | 18.5% | 12.1% | - | - | - | - |
| Մ. Բրիտանիա | 17.0% | - | - | 9.8% | - | - |
| Իսրայել | 13.0% | 9.3% | - | - | - | - |
| **Ռուսաստան** | **11.6%** | **14.2%** | **-** | **15.3%** | **8.9%** | **10.3%** |
| **Իրան** | **8.0%** | **9.2%** | **-** | **-** | **-** | **-** |
| **ԱՄՆ** | **6.3%** | **9.9%** | **-** | **5.2%** | **6.5%** | **11.0%** |
| Գերմանիա | 5.1% | 7.0% | 10.0% | 9.0% | - | 6.5% |
| Իտալիա | - | 4.9% | 32.5% | 5.2% | 5.5% | 5.2% |
| ԱՄԷ | - | 5.6% | - | - | - | - |
| **Թուրքիա** | **-** | **-** | **5.1%** | **8.2%** | **23.3%** | **10.6%** |
| Ֆրանսիա | - | - | 7.9% | - | - | 6.0% |
| Վրաստան | - | - | **5.2%** | - | - | - |
| Չեխիա | - | - | 11.9% | - | - | - |
| Ղազախստան | - | - | - | 7.0% | - | - |
| ՉԺՀ | - | - | - | 8.7% | - | - |
| Հունաստան | - | - | - | - | 11.9% | - |
| Իսպանիա | - | - | - | - | 5.2% | - |
| Թուրքմենստան | - | - | - | - | 5.8% | - |
| Ուկրաինա | - | - | - | - | - | 5.7% |
| Բուլղարիա | - | - | - | - | - | 4.9% |
| Ադրբեջան | - | - | - | - | - | **8.2%** |
| *Աղբյուրը՝ CIA Factbook, http://www.cia.gov/cia/* | | | | | | |

### *Ռազմաքաղաքական համագործակցություն*

Առանձին հարցերի միջոցով չափվել է հասարակությունների վերաբերմունքը ՆԱՏՕ-ի հետ համագործակցության և ՆԱՏՕ-ին անդամագրվելու վերաբերյալ (*Գծապատկեր 17*):

Առաջին ակնհայտ արդյունքն այն է, որ ՆԱՏՕ-ի հետ համագործակցության և ՆԱՏՕ-ին անդամագրվելու նկատմամբ վերաբերմունքն ակնհայտորեն ուժեղ զուգորդված է, իսկ Թբիլիսիում համարյա համընկնում է: Թբիլիսիում ՆԱՏՕ-ին անդամակցելուն լիովին կամ մասամբ կողմ է բնակչության 83.7%-ը, Բաքվում՝ 62.1%-ը, Երևանում՝ 37.1%-ը, այսինքն՝ հարավկովկասյան մայրաքաղաքների բնակչության պատկերացումներում ՆԱՏՕ-ն տարածաշրջանային անհրաժեշտ գործոն է: Երևանում դրան հակակշռում է բնակչության 28.6%-ը:

Երևանում և Բաքվում կա նշանակալի հատված, որը կողմնորոշված չէ այդ հարցում՝ Երևանում՝ մոտ 3%, Բաքվում՝ մոտ 30%[1]:

*Գծապատկեր 17.*

*ՆԱՏՕ-ի հետ համագործակցությանը և անդամությանը «Լիովին սատարող» կամ «Մասամբ սատարող» անձանց թիվը*




## *Միջազգային կազմակերպություններ*

Անդրկովկասում գործող միջազգային կառույցների վերաբերյալ տրվել են հետևյալ հարցերը.

*S3. «Թվարկվող միջազգային կազմակերպություններից որո՞նք գիտեք»:*

Հարցվողին ներկայացվում էին միջազգային կազմակերպությունների լրիվ անուններ-ը և դրանց հապավումները պարունակող քարտը (*Գծապատկեր 18*):

*Գծապատկեր 18-ից* ակնհայտ է, որ Թբիլիսիի բնակչությունն առավել քաջատեղյակն է միջազգային կազմակերպություններից (բացի ՄԱԿ գրասենյակներից), ինչը բնական հետևանք է այն բանի, որ, որպես կանոն, միջազգային կազմակերպություններն այդտեղից են սկսում իրենց գործունեությունն Անդրկովկասում, բացի այդ, Թբիլիսիում են գտնվում միջազգային կազմակերպությունների հարավկովկասյան տարածաշրջանային կենտրոն-ները: Թբիլիսիում են կազմակերպվում միջազգային կազմակերպությունների տարածա-

[1] Խորացված մեթոդները կարող են հիմքեր տալ ենթադրելու այդ հատվածների պատկերացումների տրենդի մասին:

շրջանային տարաբնույթ միջոցառումները: Այդտեղ են գտնվում նաև հարավկովկասյան ՀԿ-ների համագործակցության կենտրոնական գրասենյակները:

*Գծապատկեր 18.*

*Միջազգային կազմակերպություններին տեղյակ անձանց թիվը, %:*




| | Կար. խաչ | ԵԽ | ԵԱՀԿ | ՄԱԿ | ԱՊՀ | ՀԲ | IMF | EBRD | Եվր. | USAID |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Երևան | 92,5% | 74,1% | 43,3% | 80,9% | 78,2% | 63,9% | 21,4% | 18,4% | 30,9% | 29,4% |
| Բաքու | 74,5% | 77,8% | 68,9% | 85,6% | 68,2% | 54,8% | 32,0% | 23,6% | 32,1% | 24,8% |
| Թբիլիսի | 95,1% | 84,8% | 76,5% | 73,0% | 73,4% | 87,2% | 75,5% | 42,6% | 57,7% | 47,6% |

Տեղեկացվածության բարձր աստիճանը Թբիլիսիում առավել ցայտուն է Արժույթի միջազգային հիմնադրամի, միջազգային բանկերի ու ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և հիմնականում նրանից ֆինանսավորվող «Եվրասիա» հիմնադրամի նկատմամբ: Մյուս կողմից՝ այդ կազմակերպությունների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը նշանակալիորեն զիջում է ՄԱԿ, ԱՊՀ, ԵԽ և ԵԱՀԿ վերաբերյալ տեղեկացվածության մակարդակին:

Բաքվում և Երևանում միջազգային կազմակերպությունների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակների միջին արժեքները մոտավորապես նույնն են, բացի ԵԱՀԿ-ից, որի մասին տեղեկացվածության միջին մակարդակը Երևանում ակնհայտորեն ցածր է:

Ամենաշատ ճանաչվածը Կարմիր խաչն է Երևանում և Թբիլիսիում:

Ինչ վերաբերում է միջազգային կազմակերպությունների գործունեության արդյունավետության միջին գնահատականներին, ապա նախ՝ դրանց միջին արժեքները գտնվում են «Շատ թե քիչ արդյունավետ» գնահատականի մակարդակից մի փոքր ավելի բարձր *(Գծապատկեր 19):*

*Գծապատկեր 19.*

*Միջազգային կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը*

Տրված են պատասխանների միջին արժեքները: Պատասխանների տարբերակներն են՝ «Շատ արդյունավետ» – 5, «Արդյունավետ» – 4, «Շատ թե քիչ արդյունավետ» – 3, «Անարդյունավետ» – 2, «Լիովին անարդյունավետ» – 1




| | ԿԽ | ՀԲ | ԱՊՀ | US AID | ԵԽ | Եվրաս | EBRD | ԵԱՀԿ | ՄԱԿ | IMF |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Երևան | 3,87 | 3,48 | 3,43 | 3,47 | 3,41 | 3,47 | 3,43 | 3,25 | 3,27 | 3,23 |
| Բաքու | 3,94 | 3,57 | 3,37 | 3,22 | 3,66 | 3,05 | 3,26 | 2,79 | 3,27 | 3,29 |
| Թբիլիսի | 3,61 | 3,67 | 3,36 | 3,61 | 3,62 | 2,96 | 3,32 | 3,40 | 3,35 | 3,57 |

Միջազգային կազմակերպություն

Մյուս կողմից՝ այդ միջին գնահատականների միջև տարբերությունների ոչ շատ բարձր մակարդակը (բացի, միգուցե, Բաքվում ԵԱՀԿ գործունեության գնահատականից) թույլ է տալիս ենթադրել, թե այդ գնահատականներն առավելապես պայմանավորված են հասարակության սովորական անդամի մոտ այդ գործունեության մասին տեղեկության պակասով, որը, փոխազդելով ստանդարտ հարցվողի համագործակցության հակվածության հետ, տվել է «Չեզոքի» շուրջ տատանվող գնահատականներ:

*Որպես այս վարկածի անուղղակի հիմնավորում դիտենք միջազգային կազմակերպությունների գործունեությունը գնահատելիս «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակները* (Գծապատկեր 20), *որտեղից երևում է, որ բացի Կարմիր խաչ և «Եվրասիա» հիմնադրամ կազմակերպություններից, բոլոր միջազգային կառույցների համար ստացվել են շատ բարձր «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակներ: Դրանք հատկապես բարձր են Երևանում և Թբիլիսիում: Հատկանշական է Բաքվում «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակի միատեսակ մակարդակը ԵԱՀԿ, ՄԱԿ, ԵԽ, ՀԲ, «Եվրասիա» հիմնադրամ կազմակերպությունների համար:*

*Գծապատկեր 20.*

*Միջազգային կազմակերպությունների աշխատանքների արդյունավետության վերաբերյալ կարծիքների ձևավորվածության աստիճանը*




| | ԿԽ | Եվրաս | ԵԽ | ՀԲ | ՄԱԿ | USAID | ԵԱՀԿ | EBRD | IMF | ԱՊՀ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Երևան | 8,6% | 13,9% | 19,6% | 23,2% | 23,7% | 28,4% | 29,0% | 32,6% | 33,6% | 36,6% |
| Բաքու | 7,8% | 11,1% | 9,7% | 11,9% | 11,5% | 30,1% | 9,7% | 26,8% | 18,4% | 32,4% |
| Թբիլիսի | 26,3% | 38,8% | 34,3% | 31,1% | 35,3% | 39,7% | 37,5% | 44,8% | 35,4% | 47,5% |

## Ընդհանուր եզրակացություններ

### Մայրաքաղաքների բնակչության ընդհանուր բնութագիրը

Երևանի հասարակությունն ունի առավելապես իրատեսական պատկերացումներ և վերաբերմունք հասարակական-քաղաքական ներքին և արտաքին իրավիճակի մասին: Այն իրեն օտարված է զգում պետությունից: Այստեղ գործարկվել են հայ հասարակության ավանդական հարմարվողական (ադապտիվ) մեխանիզմները, որոնց շնորհիվ հասարակությունը կայուն և իր անդամների համար բավական ապահով միջավայր է: Հասարակությունը վերագտել է իր ավանդական հենասյունը՝ եկեղեցին, որին ավելացել է ևս մեկը՝ բանակը: Մյուս կողմից՝ հասարակությունը բարձր պահանջներ է առաջադրում պետությանը: Հասարակական կոնյունկտուրան պարունակում է զարգացման և՛ կառուցողական, և՛ ապակառուցողական ներուժ: Հասարակության մեջ տեղի են ունենում դրական տեղաշարժեր հարավկովկասյան համագործակցության հնարավորության աճի տեսակետից: Հասարակական պատկերացումներում առաջացել է արտաքին անվտանգության խնդիրների լուծման այլընտրանք. բացի Ռուսաստանի Դաշնությունից ***արդեն*** *որպես այդպիսին գնահատվում է նաև Հյուսիսատլանտյան դաշինքը:*

Թբիլիսիի հասարակությունում երկարատև թույլ կենտրոնական իշխանության և պարբերական արտաքին ճնշումների հետևանքով թուլացել են հասարակական համակեցության նորմերը: Հասարակության մեջ առկա է հուզական լիցք ունեցող կրոնական զարթոնք: Բացի այդ, հասարակության մեջ ներկայում առկա է հոգեբանական հզոր վերելք՝

կապված նոր իշխանությունների հաղթանակի և գործունեության հետ, որը բնութագրվում է նրա նկատմամբ բարձր «վստահության վարկով»: Թբիլիսիի հասարակությունը մնում է հարավկովկասյան ընդհանուր համագործակցության կամուրջը և տարածքը: Հասարակության մեջ գերակշռում է ռուսական կողմնորոշումը, որը հավանաբար պայմանավորված է և՛ ռացիոնալ (պրագմատիկ), և՛ սոցիալ-մշակութային գործոններով: Ռուսաստանի հետ հարաբերությունների հաշվեկշռման գործոն է դիտվում Հյուսիսատլանտյան դաշինքը:

Բաքվի հասարակությունը նույնպես վերադառնում է իր ավանդական վիճակին՝ առկա են ընտանեկան, ինչպես նաև այլ փոքրխմբային ամուր և վստահելի հարաբերություններ, ինչպես նաև բարձրագույն իշխանության նկատմամբ արտաքին օրինապահության բարձր մակարդակ: Կրոնական նույնականացումը վերագտել է իր նշանակությունը, սակայն՝ էականորեն այլ կարգավիճակում: Եթե 1920-30-ական թվականներին այն փոխարինում էր ազգային ինքնանույնականացմանը, ապա ներկայում այն ունի ազգակերտիչ գործառույթ և վերածվել է ազգային ինքնանույնականացման ենթատարրի: Կայացման փուլում գտնվող պրոտոազգային հասարակության ագրեսիվությունը՝ հակոտնյա ազգի (հայերի) նկատմամբ իր ներկա վիճակում ծայրահեղ դժվարացնում է հայ-ադրբեջանական համերաշխ գոյակցությունը և դրական համագործակցությունը: Հասարակությունը դեռ պահպանել է իր քաղաքակրթական վերջնական դիրքորոշման այլընտրանքները՝ թյուրքական (ազգային), իրանական (կրոնամշակութային՝ շիա): Դժվար է գնահատել արևմտյան արժեքների ներմուծման հնարավոր հետևանքները. առկա տվյալների հիմքը թույլ չի տալիս կատարել հիմնավորված ենթադրություններ:

### *Կրոնի դերը*

Բոլոր մայրաքաղաքներում կրոնը վերածվել է ազգային ինքնանույնականացման պարտադիր տարրի: Մայրաքաղաքների համար տվյալ պետությունների հիմնական ազգերի մոտ «դասական» կրոնական գիտակցության առկայությունը, կարելի է ***ենթադրել,*** Թբիլիսիում մոտ 15% է, Բաքվում՝ մոտ 10%, Երևանում մոտ՝ 8%:

Պետական եկեղեցիների կամ ավանդական կրոնների ներկայացուցիչների հանդուրժողականությունը միմյանց նկատմամբ ավելի բարձր է, քան նորահայտ կրոնական ուղղությունների և աղանդների նկատմամբ:

Կրոնական գիտակցության տարրերի էկլեկտիկ ինտեգրումը ազգային ինքնանույնականացման համալիրում բերում է ազգային և կրոնական անհանդուրժողականության աճի: Այդ իրավիճակներն առկա են բոլոր երեք մայրաքաղաքներում:

### *Քաղաքական վարք*

Երևանում և հատկապես Թբիլիսիում առկա է քաղաքականության նկատմամբ հետաքրքրության և քաղաքական վարքի տարրերի (տեղեկացվածություն, մասնակցություն քաղաքական դեպքերին) ավելի բարձր մակարդակ, քան Բաքվում, որին բնորոշ է քաղաքական մասնակցության օրինապահության ցուցադրական տարրի՝ նախագահի և նախագահական ընտրությունների բարձր մակարդակ և ռիսկային տարրերի (հետաքրքրվածություն և քաղաքական տեղեկությունների փոխանակում) ցածր մակարդակ:

Կուսակցական պատկանելության տեսակետից[1] Երևանում առկա է «բազմակուսակցականություն» (առկա են 3 համարյա հավասար մասնակիցներով և 4 «երկրորդային» կուսակցությունների անդամներ), Թբիլիսիում արտահայտվել է երկու կուսակցությունների մրցակցություն, սակայն առկա են ևս 3 «երկրորդային» կուսակցություններ, Բաքվում ակնհայտորեն միակուսակցական համակարգ է՝ «Ենի Ազերբայջանի» բացարձակ գերակշռությամբ՝ 81.5% անդամություն, որի ընդդիմադիրն է միայն «Մուսավաթ» կուսակցությունը՝ 4.3%:

Բոլոր մայրաքաղաքներում քաղաքական հաղորդակցման հիմնական աղբյուրը հեռուստատեսությունն է: Սակայն խնդրահարույց է մնում միջանձնական հաղորդակցման աղբյուրի և հեռուստատեսային քարոզչության դերերի ու փոխհարաբերության փոխազդեցությունը հանրային կարծիքի ձևավորման վրա:

### *Համագործակցության ներուժ*

Թբիլիսիում և Երևանում առկա է տարածաշրջանային համագործակցության պատրաստակամության և հակամարտություններում ընդդիմադիրների նկատմամբ հանդուրժողականության աճ, ի տարբերություն Բաքվի, որի հասարակությունը պատրաստ չէ տարածաշրջանային համագործակցության և արտահայտել է ծայրահեղ անհանդուրժողականություն[2]:

Տարածաշրջանային համագործակցության հնարավորության տարածք (եղել և) մնում է Վրաստանը:

Մյուս կողմից՝ Հարավային Կովկասում տեղի ունեցող առավել երկարատև և խորքային գործընթացները՝ ա) խորհրդային քաղաքակրթական-մշակութային ինքնության կազմալուծումը, բ) կրոնական գործոնի նույնականացման գործառույթի աճը, գ) անդրկով-

[1] Երևանում կուսակցական պատկանելություն են նշել հարցվողների 0.9%-ը, Թբիլիսիում՝ 1.5%-ը, Բաքվում՝ 2.1%-ը:

[2] Բաքվի հասարակությունը նկարագրող բնութագրիչներից բխող արտաքին օրինապահության բարձր մակարդակը թույլ չի տալիս քանակապես (ճշգրիտ) գնահատել անհանդուրժողականության օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները:

կասյան ազգերի ավանդական ինքնության վերականգնումը, դ) քաղաքակրթական տարաբնույթ կողմնորոշումները Հարավային Կովկասում, աստիճանաբար վերականգնում են նրա քաղաքակրթական մարգինալ տարածքի կարգավիճակը, իսկ դրա զուգորդվածությունը աշխարհաքաղաքական բուֆերային տարածքի կարգավիճակի հետ ծայրահեղորեն դժվարացնում է Հարավային Կովկասի բոլոր ազգային պետական և քվազիպետական միավորների ընդհանուր ինտեգրացիոն գործընթացը[1]:

Ըստ երևույթին, հարավկովկասյան ժողովրդավարությունների կառուցման նվազ հակամարտային ուղին դրանց կառուցումն է ազգային և կրոնական տեսակետից համասեռ պետական և քվազիպետական միավորումներում, դրանց միջև համագործակցության զարգացումը միջպետական մակարդակում և միայն որոշակի ժամանակից հետո կարող է դիտարկվել Եվրամիության նման ***միասնական հասարակական կազմավորման*** կառուցման հնարավորությունը, որտեղ գերակա են եվրոպականի նման հասարակական արժեքները:

[1] Հարավային Կովկասում ինտեգրացիոն նախագծերի իրականացման տեսակետից կիրառելի է Իրաքի վերաբերյալ Հ.Քիսինջերի արտահայտած տեսակետը. «Մասնավորապես, Իրաքի նման բազմաէթնիկ և բազմակրոն հասարակությունների դեպքում, անհրաժեշտ է հասկանալ ժողովրդավարության խոչընդոտների բնույթը: Արևմուտքում ժողովրդավարությունները զարգացել են միատարր հասարակություններում: Այստեղ գոյություն չունեին ինստիտուցիոնալ արգելքներ փոքրամասնությունների համար, որոնք վերածվում էին մեծամասնության: Ընտրություններում կրած պարտություններն այստեղ դիտվում էին որպես ժամանակավոր նահանջ, որը կարող էր նորից փոխարինվել առաջընթացով: Սակայն այն հասարակություններում, որտեղ առկա են հստակ ազգային և քաղաքական սահմաններ, փոքրամասնության կարգավիճակում լինելը հաճախ համարժեք է հարատև խտրականության և քաղաքական մահացման հարատև վտանգին» (Kissinger H., America's Assignment Newsweek, October 31, 2004):
Այսպիսով, եթե ժողովրդավարությունը դիտվում է որպես գերակայություն, ապա կասկածի տակ է դրվում դրա կառուցումը միջինարևելյան քաղաքակրթությանը պատկանող միասնական, մեծ և անհամասեռ պետական միավորումներում: Իսկ դրանից մասնավորապես բխում է, որ, օրինակ՝ Հարավային Կովկասում, որն իր ավանդական բնույթով ավելի մոտ է միջինարևելյան քաղաքակրթական տարածքին, քան եվրոպականին, միասնական հետերոգեն հասարակական համույթի կազմավորումը այստեղի կրոնական, ազգային և քաղաքակրթական տեսակետից տարբեր ազգային և պետական միավորներից, ունի անհաջողության մեծ հավանականություն, որի պատճառով հավանաբար մերժելի է: